

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարավային Օսիայի շուրջ հակամարտություն.
 առնչություններ ՀՀ ազգային անվտանգությանը 4

Армянский мир и региональная система безопасности
 Южного Кавказа после окончания постсоветской эпохи 12

Անկարայի Հայկական հետազոտությունների ինստիտուտ 15

Թուրքական վերլուծական կենտրոններ.
 ընդհանրական բնութագիր 17

Ստամբուլի հայկական դպրոցները 22

Ձախողված երկրների ինդեքսը 2008թ. 25

Сценарий будущего 32

Наука кризисология или от локальных кризисов к
 Первой глобальной великой депрессии XXI века 37

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅԻ ՇՈՒՐՁ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ

Ազգային փոքրամասնությունների ճակատագիրը
պայմանավորված է իշխող ազգի
մարդասիրությամբ և քաղաքակրթվածությամբ:
Լորդ Ակտոն (1834 – 1901)

Հարավային Օսիայի խնդրի հետ կապված՝ Ռուսաստանի իրագործած ռազմական գործողությունները սահմանվել են որպես «լոկալ» և «արդարացի» պատերազմ: Ներկայացվել են հակամարտությանն ուղեկցող տեղեկատվական պատերազմի որոշ առանձնահատկություններ և վերլուծվել են հակամարտող կողմերի, այդ թվում՝ ԱՄՆ-ի, պատերազմը սկսելու հնարավոր դրդապատճառներն ու նկատառումները: Ցույց է տրվել, որ դիտարկվող ռազմաքաղաքական զարգացումները ենթարկվում են Երկրորդ սառը պատերազմի տրամաբանությանը և հենված են երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների ռազմավարության վրա:

Հարավային Օսիայի խնդրի հետ կապված՝ 2008թ. օգոստոսյան զարգացումները հանգեցրին նոր աշխարհաքաղաքական իրողությունների, որոնց ադեկվատ ընկալումը և հետևություններ անելը առաջնահերթ խնդիր է և՛ ՀՀ՝ որոշումներ ընդունող քաղաքական ընտրանու, և՛ վերլուծաբանական հանրության համար: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի և Վրաստանի միջև տեղի ունեցած ռազմական հակամարտությունն ունի բազմաթիվ բաղադրիչներ և հարթություններ, այսինքն՝ այդ գործընթացի համալիր հետազոտությունը դեռևս երկար ժամանակ հրատապ է լինելու վերլուծաբանների համար: Հոդվածում փորձել ենք սահմանումներ տալ ռազմաքաղաքական գործընթացներին, դիտարկել դրանց առանձնահատկությունները և հնարավոր դրդապատճառները: Որպես ելակետ ընդունվել է այն մտեցումը, ըստ որի՝ կատարվածը հստակորեն ենթարկվում է բազմաբևեռ համակարգին բնորոշ Երկրորդ սառը պատերազմի տրամաբանությանը [1]: Միևնույն ժամանակ, ներկայացված է տեսակետ, համաձայն որի՝ հակամարտության կողմ հանդիսացող Միացյալ Նահանգներն իր գործողություններում ղեկավարվել է երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներին բնորոշ ռազմավարությամբ [2]: Նման մտեցումները պետք է որ նպաստեն վրաց-ռուսական պատերազմի վերաբերյալ հնարավորինս օբյեկտիվ պատկերացումների ձևավորմանը, ինչը թույլ կտա որոշ հետևություններ և կանխատեսումներ անել գոնե մարտավարական հեռանկարի համատեքստում:

«Լոկալ» և «արդարացի» պատերազմ. Ինչպես հայտնի է, Առաջին սառը պատերազմին հատուկ էին սահմանափակ տարածքներում ընթացող «լոկալ պատերազմները»¹, որոնց օրինակներն են Կորեայում (1950-1953թթ.), Վիետնամում (1959-1975թթ.) և Աֆղանստանում (1979-1987թթ.) տեղի ունեցած պատերազմական իրադարձությունները [3]: Երկբևեռ աշխարհակարգում լոկալ պատերազմները յուրահատուկ «հարթակներ» էին, որտեղ միմյանց դեմ հակամարտում էին ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, որոնց ընթացքում, սակայն, նրանց զինված ուժերը (ԶՈւ) միմյանց հետ պաշտոնական և անմիջական ռազմական շփում չունեին, քանի որ դա կարող էր հանգեցնել միջուկային աղետի. Կորեայում և Վիետնամում անմիջական պատերազմող կողմ էր ԱՄՆ-ը, որին անուղղակիորեն հակազդում էր խորհրդային ռազմական ներուժը, իսկ Աֆղանստանում պատկերը հակառակն էր: Հատկանշական է, որ ներկայում Իրաքում և Աֆղանստանում ԱՄՆ-ի կողմից վարվող լոկալ պատերազմներում Ռուսաստանը դիմակայող կողմ չէ: Աֆղանստանի պարագայում ՌԴ-ն անգամ հաղորդակցական բնույթի որոշ աջակցություն է ցուցաբերում ԱՄՆ-ին (ՆԱՏՕ-ին)², իսկ Իրաքի պարագայում անհամաձայնություններն արտահայտվում են դիվանագիտական (օրինակ՝ իրաքյան զարգացումներ-

¹ <http://www.voina-i-mir.ru/dicdefinition/?id=83>

² Պատերազմի հետևանքով ՌԴ-ՆԱՏՕ հարաբերությունների սառեցումը, համաձայն ՌԴ պաշտոնատար անձանց հայտարարությունների, կարող է հանգեցնել փոփոխությունների նաև այս ոլորտում:

բում ակտիվ դիրքորոշում ունեցող Իրանին ցույց տրվող ռուսական աջակցությամբ) և տնտեսական (ռուսական նավթային ընկերությունների խնդիրները) հարթություններում:

Վերոնշյալի համատեքստում Ռուսաստան-Վրաստան ռազմական ընդհարումն առաջին «լոկալ պատերազմն» է հանդիսանում, որը ենթարկվում է արդեն Երկրորդ սառը պատերազմի տրամաբանությանը և որի ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ՌԴ հակասություններն ընդունեցին ռազմական բնույթ: Այսինքն՝ կարելի է ամրագրել, որ ներկայիս գլոբալ քաղաքական գործընթացները լիովին ենթարկվում են դասական սառը պատերազմի «կանոններին», ինչն իր հերթին վկայում է բազմաբևեռ աշխարհակարգի վերջնական ձևավորման մասին:

Հարկ է նշել, որ ռազմագիտությունում պատերազմները բնութագրվում են¹ նաև որպես «արդարացի» և «ոչ արդարացի»: Այդ տեսանկյունից, թերևս, կասկած չի հարուցում, որ օսական և ռուսական կողմերը վարում էին դասական «արդարացի» պատերազմ². իրենց հայրենիքում բնակվող օս (ալան) ժողովուրդը Ռուսաստանի օգնությամբ³ պաշտպանեց իր ազգային ինքնությունը, ֆիզիկական գոյությունը և պատմական տարածքը: Վրաստանի և նրա դաշնակիցների կողմից վարվող պատերազմը պետք է ընդունել որպես ոչ արդարացի և ԽՍՀՄ-ում իրենց ունեցած «միկրոկայսրության» վերականգնմանն ուղղված հակաժողովրդավարական ու հակամարդկային գործողություն:

Տոտալ տեղեկատվական գործողություններ. Հակամարտության տեղեկատվական բաղադրիչը կարիք ունի առանձին և ծավալուն հետազոտության, այդ պատճառով մենք ընդամենը կառանձնացնենք տեղեկատվական պատերազմի ընդամենը մի քանի առանձնահատկություն:

Գործընթացները մեղիադրություն հիշեցնում էին Առաջին սառը պատերազմի ագիտացիոն-պրոպագանդիստական պայքարը, երբ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը տոտալ ձևով տրամագծորեն հակառակ և իրարամերժ տեղեկատվություն էին սփռում, որը հիմնականում նախատեսված էր սեփական լսարանի համար: Սառը պատերազմի ավանդույթների համաձայն՝ Թբիլիսին արգելափակեց իր տարածքում ոչ միայն ռուսական հեռուստակայանների, այլև համեմատաբար հավասարակշռված *Euronews*-ի հաղորդումները: Տեխնիկական արգելափակման փորձեր կատարվեցին ԱՄՆ-ում, երբ *Fox News* հեռուստակայանի հաղորդման ժամանակ ընդհատվեց հարցազրույցի հրավիրված օտուհու ելույթը: Բնականաբար, պրոպանդիստական պայքարում ոլորտում ապատեղեկատվական գործողությունները մեծ տեսակարար կշիռ ունենին⁴:

Հատկանշական է նաև, որ եվրոպական ՉԼՄ-ում կարելի էր հանդիպել ավելի կշռադատված մոտեցումների, որոնք չարդարացնելով ռուսական կողմին՝ միևնույն ժամանակ քննադատում էին Սահակաշվիլու վարչախմբի գործողությունները:

Պատերազմի մարդասիրական և բարոյական գործոնը շոշափվում էր հիմնականում ռուսական լրատվամիջոցներում, իսկ ամերիկյան ՉԼՄ-ն շեշտադրում էր Վրաստանի տարածքային ամբողջականության խնդրի վրա: Այսպիսով կարծես թե խախտվեց Առաջին սառը պատերազմի այն ավանդույթը, համաձայն որի՝ մարդասիրական խնդիրների կարևորումը Արևմուտքի մենատիրությունն էր հանդիսանում⁵: Նկատենք, որ այս հանգամանքը թուլացնում էր արևմտյան քարոզչությունը և զգացական լիցք էր հաղորդում ռուսաստանյանին՝ դարձնելով այն ավելի արդյունավետ: Թերևս, այս հանգամանքի գիտակցումն էր, որ քարոզչական հարուստ ավանդույթներ ունեցող *BBC*-ի ռուսալեզու կայքի նյութերը միանշանակ

¹ Պատերազմները բնութագրող սահմանումները (որակավորումները) մասնագիտական գրականությունում մեկ տասնյակից ավելին են (*տե՛ս [3]*):

² <http://www.voina-i-mir.ru/dicdefinition/?id=80>

³ Ռուսաստանի «արդարացի պատերազմական» գործողությունները թույլ տվեցին որոշ քաղաքագետների մեկնաբանել դրանք որպես ճնշված ժողովուրդներին փրկելու (ինչպես դա տեղի ունեցավ 19-րդ դարում օսմանյան լծից բուլղարներին ազատագրելու պարագայում) ռուսական ավանդույթի վերականգնում:

⁴ Տե՛ս, օրինակ <http://lenta.ru/news/2008/09/08/cnn/>

⁵ Դա առանձնապես հատկանշական էր 1968թ, երբ խորհրդային զորքերը մտան Չեխոսլովակիա, և այդ համատեքստում պետք է նկատել, որ առանձին արևմտյան լրատվամիջոցների կատարած համեմատությունները, թե Ռուսաստանի ներկայիս գործողությունները հիշեցնում են չեխոսլովակյան դեպքերը, միանգամայն զուրկ են որևէ հիմնավորումից:

հակառուսական չէին, քանի որ դա կարող էր վարկաբեկել բրիտանական լրատվամիջոցը ռուսական լսարանի առջև:

Կիբեռհարձակումների ոլորտում նախահարձակը, թերևս, նույնպես վրացական կողմն էր. օգոստոսի 8-ին, Յիսինվալի հրետակոծմանը զուգահեռ, հաքերական կիբեռհարձակումների ենթարկվեց հարավօսական վեբկայքերի մի զգալի մասը (*www.osradio.ru*, *www.osinform.ru* և ուրիշներ): Ավելի ուշ հարձակումներ կատարվեցին նաև ռուսաստանյան լրատվամիջոցների, մասնավորապես՝ անգլերեն հաղորդվող *Russia Today* հեռուստաալիքի կայքի վրա: Պատասխան քայլերն իրենց չսպասեցրին. «կոտրվեցին» նախագահ Սահակաշվիլու, Վրաստանի պառլամենտի, կառավարության, ԱԳՆ-ի և պետական այլ մարմինների կայքերը:

Հայկական լրատվամիջոցները հավասարակշռված, բայց այնքան էլ բովանդակալից չէին լուսաբանում գործընթացները: Այդ համատեքստում առանձնացնենք «*Արմենիա*» հեռուստատեսությամբ թողարկվող «*Ամերիկայի ձայնի*» մեկնաբան Մարատյանի ավելի քան պարզունակ մեկնաբանությունն (12.08.08) այն մասին, թե ԱՄՆ-ը ռազմական օգնություն չցուցաբերեց Վրաստանին այն պատճառով, որ նախագահ Սահակաշվիլին ընտրությունների ժամանակ խախտումներ էր թույլ տվել¹:

Հակամարտության ընթացքը ևս մեկ անգամ շեշտեց տեղեկատվական գործոնի կարևորությունն արդի ռազմաքաղաքական գործընթացներում: Կան նաև բոլոր հիմքերը պնդելու, որ ռազմական գործողությունները մասն էին կազմում երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմի: Սակայն նման մոտեցումը ենթադրում է նախապես պատերազմի հնարավոր դրդապատճառների քննարկում:

Պատերազմական գործողությունների հնարավոր դրդապատճառները. Մինչ օգոստոսյան պատերազմի սկիզբը Վրաստանն իր նախկին ինքնավարությունների՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի հանրապետությունների (ՀՕՀ և ԱՀ) նկատմամբ վարում էր դիրքային-հոգեբանական պատերազմ: Նկատենք, որ վրացական կողմի՝ ամերիկյան և բրիտանական խորհրդատուների կողմից ղեկավարվող² գործողությունները, որոնց նպաստում էին ՀՕՀ և ԱՀ տարածքների աշխարհագրությունը և էթնիկական առումով ոչ միատարր բնակչությունը, բավական արդյունավետ էին: Թբիլիսին բավական հաջող էր իրագործում այսպես կոչված «սողացող էքսպանսիայի» ռազմավարությունը. վերահսկողության տակ վերցվեց Կողորի կիրճը, իսկ ՀՕՀ տարածքում ամրացվեցին վրացական հենակետերը: Ստեղծված իրավիճակը կարծես թե պետք է բավարարեր ամերիկացիներին, քանի որ Վրաստանից ռուսաստանյան ՋՈւ-ի դուրսբերումից հետո շարունակական լարվածության բուֆերային գոտիներ ունենալը (ի դեմս ՀՕՀ-ի և ԱՀ-ի) ՌԴ սահմաններում ռազմավարական տեսանկյունից կարծես թե շահեկան էր: Դա թույլ էր տալիս վերահսկել էներգակիր խողովակաշարերը, մոտ լինել Հյուսիսային Կովկասի լարվածության կենտրոններին, ունենալ ռազմական հենակետեր Իրանին օդային հարավածներ հասցնելու համար և, ամենագլխավորը՝ «փակել ռուսների մուտքը» Հարավային Կովկաս: Միննույն ժամանակ, բուֆերային գոտիների անորոշ կարգավիճակը և ուրվագծերն ընդհանուր առմամբ ձևավորում են «ամորֆ» և դինամիկ իրավիճակ, ինչն անկանխատեսելի էր դարձնում քաղաքական հեռանկարը: Այսինքն՝ Վրաստան – «նախկին ինքնավարությունների» հարաբերությունների ապագան, հաշվի առնելով ռուսական գործոնի գլոբալ և տարածաշրջանային ակտուալացումը, ռիսկեր էր պարունակում ԱՄՆ-ի համար:

Ակնհայտ է նաև, որ Վրաստանի այսպես կոչված «տարածքային ամբողջականության» վերականգնման հարցը առանձնապես չպետք է մտահոգեր Վաշինգտոնին: Ավելին. այդ հիմնախնդրի շարունակական առկայությունը յուրահատուկ երաշխիք է ԱՄՆ-ի համար Վրաստանի հետ երկարատև հարաբերություններ ունենալու տեսանկյունից:

¹ Նշենք, որ «դեմոկրատական» իդեալների այս կարգի մեկնաբանումները կրկնօրինակում են «կոմունիստական» պրոպագանդան, ինչն անուղղակիորեն կարող է վկայել այն մասին, որ հեռանկարում ժողովրդավարական գաղափարախոսությունը կարող է և կիսել կոմունիստականի ճակատագիրը:

² Հարկ է նկատել, որ տեղեկատվական-հոգեբանական հարթությունում վրացական ներկայիս իշխանությունները նույնպես բավական հմուտ են գործում:

Վերոնշյալ հանգամանքները հիմք են ծառայում վերլուծաբանների մի մասի համար, չժխտելով ամերիկյան գործոնի կարևորությունը¹, համարել, որ պատերազմական գործողություններ սկսելու նախաձեռնությունը պատկանում էր բացառապես Վրաստանի նախագահին և պայմանավորված էր նրա անհեռատես քաղաքականությամբ ու անհատական հայտնի հատկանիշներով: Սակայն կարծում ենք, թե հնարավոր է, որ Հարավային Օսիայի դեմ ձեռնարկած «Մաքուր դաշտ» գործողությունը ոչ միայն տեսականորեն մշակվել, այլև իրագործվել է անմիջականորեն ամերիկյան ղեկավարության ներքո, և նման մոտեցման համար կան որոշակի հիմնավորումներ:

Հայտնի է, որ 2003թ. «գունավոր» հեղափոխությունից հետո Վրաստանը վերածվել է տարածաշրջանում ԱՄՆ «ֆորպոստի»: Վրաստանում ամերիկյան քաղաքական ու ռազմական (սպառազինության, հետախուզության՝ հատկապես ռադարային-էլեկտրոնային տեխնիկական միջոցների, ինչպես նաև զինվորական խորհրդատուների և հրահանգիչների տեսքով²) ներկայության ավելի քան մեծ չափը որոշ քաղաքագետների թույլ է տալիս այդ երկիրը դասել այսպես կոչված «*proxy*» (այսինքն՝ այլոց կողմից միջնորդված, ինքնուրույնությունից զուրկ) պետությունների շարքին³: Նման պայմաններում խիստ դժվար է ակնկալել, թե վրացական իշխանությունները կարող են ինքնակամ որոշումներ ընդունել. դա առնվազն հակասում է ԱՄՆ-Վրաստան հարաբերությունների տրամաբանությանը, ինչը և մեր մոտեցման, թերևս, ամենաակնհայտ հիմնավորումներից է⁴: Նման սցենարի շրջանակներում հնարավոր է նաև, որ ԱՄՆ-ը անուղղակիորեն է հրահրել Վրաստանին (օգտագործելով այդ երկրի ղեկավարի անկայուն հոգեկան դիմագիծը)՝ դիմել ռազմական գործողությունների կամ էլ, տեղյակ լինելով պատրաստվող հարձակմանը (ինչը կասկած չի հարուցում՝ հաշվի առնելով թեկուզ ամերիկյան զինվորական խորհրդատուների առկայությունը), նվազագույնը չի խոչընդոտել վրացական նախաձեռնությանը:

Մինևույն ժամանակ, պատերազմական գործողությունների դիմելու համար իրաքյան և աֆղանական հիմնախնդիրներ ունեցող ու ռազմավարական արվեստի հարուստ ավանդույթների տիրապետող ԱՄՆ-ի համար անհրաժեշտ էին, անշուշտ, լուրջ հիմնավորումներ: Դրանք հասկանալու համար, թերևս, անհրաժեշտ է անդրադառնալ գլոբալ քաղաքական իրավիճակի հետ կապված խնդիրներին:

Ինչպես հայտնի է, միաբևեռից բազմաբևեռ համակարգի վերափոխվելու անցումային փուլն ավելի կարճատև եղավ, քան կանխատեսվում էր, և այդ գործընթացի հիմնական հայտանիշը Միացյալ Նահանգների նահանջն է իր գլոբալ մենատիրական դիրքերից: Որպես հետևանք ամերիկյան քաղաքական ընտրանին սկսեց մշակել և իրագործել նոր, այդ իրողությանն ավելի ադեկվատ քաղաքականություն: Մասնավորապես, տպավորությունն այնպիսին է, որ այն տարածաշրջաններում և երկրներում, որտեղից ենթադրվում է ռազմավարական ապագայում ԱՄՆ նահանջը, ձևավորվում են երկարատև գործող և ոչ մեծ ռեսուրսներ (որոնց սղությունը զգալի է դարձել) պահանջող իրավիճակներ (այսպես կոչված «դանդաղ գործողու-

¹ Այս հարցում, թերևս, բացառություն են կազմում ՀՀ-ում գործող ընդդիմության որոշ ներկայացուցիչներ, որոնք, ելնելով քաղաքական կողմնորոշումներից բխող նկատառումներից, փաստորեն փորձում են բացառել ամերիկյան գործոնը կատարվածում:

² Համաձայն *RIA* վարչապետ Վ.Պուտինի՝ առայժմ չճշտված տվյալների հիման վրա կատարած հայտարարության, ԱՄՆ ՁՈւ ներկայացուցիչներն անմիջականորեն մասնակցել են նաև ռազմական գործողություններին: Տե՛ս <http://www.expert.ru/news/2008/08/29/putin/>

³ <http://noravank.am/ru/?page=analitics&nid=794>,

⁴ Այս մոտեցման համատեքստում նշենք, որ ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի՝ հուլիսի 10-ին Թբիլիսի կատարած (ի դեպ՝ առաջին պաշտոնական) այցից հետո, որի ընթացքում քննարկվեցին վրաց-օսական և վրաց-աբխազական հակամարտությունների խնդիրները, նախագահ Սահակաշվիլու հայտարարությունները, համաձայն ռուսաստանյան վերլուծաբանների, Հարավային Օսիայի նկատմամբ լրացուցիչ կոշտություն ստացան (տե՛ս <http://www.newsru.com/world/10jul2008/drugba.html>): Նկատենք նաև, որ պատերազմից հետո Թբիլիսի կատարած այցելության ժամանակ պետքարտուղար Ռայսից ավելի քան հինգժամյա բանակցություններ պահանջվեցին, որպեսզի Վրաստանի նախագահը ստորագրի Մեդվեդև-Սարկոզի զինադադարի պլանը, այսինքն՝ կարծես թե Սահակաշվիլուն «հակառակը» համոզելու համար երկար ժամանակ պահանջվեց, որը բանակցություններից հետո սովորականից ավելի շփոթված տեսք ուներ:

թյան ականներ»), որոնք կաշտպանեն ամերիկյան շահերը և ազդեցության հնարավորությունները: Նման քաղաքականություն իրագործելու համար արդյունավետ են «Էֆեկտների» վրա հենված «երրորդ սերնդի» տեղեկատվական ներգործությունները, երբ համալիր (պատերազմական և խաղաղ բնույթի) գործողությունները փոխում են հակառակորդի պահելաձևը ներագրողին ձեռնտու ուղղությամբ:

Բոլոր պարագաներում կասկած չի հարուցում, որ մինչև ՀՕՀ-ի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելը ամերիկյան կողմն անպայմանորեն հաշվարկել էր ռուսաստանյան միջամտության հնարավորությունը, այսինքն՝ պետք է նկատի ունենար նաև պատերազմի անհաջող ելքը: Այդ ռազմավարությունը, որը պայմանականորեն կարելի է անվանել «բացասական արդյունքից բխող էֆեկտների քաղաքականություն»¹, ունի յուրովի տրամաբանություն և նկատառումներ: Դիտարկենք դրանք.

1. *Անկախ արդյունքից՝ պատերազմն* անհակադարձելիորեն վատթարացնում է Վրաստան-Ռուսաստան հարաբերությունները (անկախ ցանկացած նոր վրացական ղեկավարության քաղաքական նախասիրություններից), ինչն ամրացնում է ամերիկյան դիրքերը տարածաշրջանի համար կարևորագույն նշանակություն ունեցող այդ երկրում:
2. *Պատերազմը Ռուսաստանի հաղթանակի պարագայում* (այս սցենարը ամերիկյան քաղաքական ղեկավարության և զինվորական հրամանատարության համար պետք է որ հաշվարկվեր) ձևավորում է վերջինիս ազդեցորի իմիջը: Դա հրատապ է ԱՄՆ ներքաղաքական, հատկապես՝ նախագահական ընտրությունների հարթությունում, քանի որ այդպիսով խրախուսվում է ռադիկալ քաղաքական ուղղությունը և առաջանում է հարձակողական ոճի գործիչների պահանջարկ (ի դեմս նախագահի թեկնածուներ Մաքքեյնի և Բարաք Օբամայի կողմից որպես փոխնախագահ առաջարկված Ջոզեֆ Բայդենի²):
3. *Պատերազմը Ռուսաստանի հաղթանակի պարագայում* արդյունավետ կլիներ նաև եվրոպական դաշնակիցների համախմբման տեսանկյունից. դա հարմար առիթ էր հիշեցնելու «հին Եվրոպային» Ռուսաստանի հետ կապված ռիսկերի մասին, իսկ «նոր եվրոպացիներին»՝ էլ ավելի սերտացնելու հարաբերությունները ԱՄՆ-ի հետ (ինչպես դա տեղի ունեցավ Լեհաստանում հակահրթիռային համակարգերի տեղակայման խնդրում):
4. Ամերիկյան համապատասխան քաղաքականության դեպքում Ռուսաստանի ռազմական հաղթանակը կներքաշեր վերջինին գլոբալ դիմակայության գործընթացների մեջ, ինչն իր հերթին կպահանջեր ռեսուրսների մեծ ծախս: Ի դեպ, նման գլոբալ դիմակայման արտահայտումներն իրենց չսպասեցրին. արդեն սեպտեմբերի առաջին օրերին Մոսկվան հայտարարեց Վենեսուելայի ավերին նոյեմբերին ռազմածովային զինավարժություններ անցկացնելու մասին³: Նման ռազմավարությունը Առաջին սառը պատերազմի ժամանակ հանգեցրել էր «սպառազինությունների մրցավազքի», ինչը և հանդիսացավ ԽՍՀՄ տնտեսական փլուզման պատճառներից մեկը: Ռազմավարական հեռանկարում ամերիկյան ընտրանին կարող է ակնկալել նման կոլապսային զարգացումներ նաև արդի Ռուսաստանում:
5. Ռուսաստանի հաղթանակից հետո վերջինիս կողմից Հարավային Օսիայի ու Աբխազիայի ճանաչումը կստեղծեր նախադեպ Ռուսաստանի Դաշնության որոշ սուբյեկտների անջատողական գործողությունների համար:

Պետք է փորձել զարգացումները գնահատել նաև Վրաստանի հնարավոր հաղթանակի պարագայում: Մա, թերևս, տեսական տարբերակ է, քանի որ նման սցենարի հավանականու-

¹ Այդ տիպի ռազմավարությունը մեր տարածաշրջանում հստակ արտահայտվեց ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում: Հրահրելով պարտության դատապարտված «գունավոր հեղափոխություն» ստեղծվեց անվերապահորեն ամերիկյան կողմնորոշում ունեցող քաղաքական մի ուժ, որի հետ այս կամ այն չափով հաշվի են նստում և՛ ներքաղաքական, և՛ արտաքին ուժերը:

² Հատկանշական է, որ ԱՄՆ-ում կարծես թե ձևավորվում է քաղաքական մի նոր ավանդույթ, համաձայն որի՝ փոխնախագահներն են իրագործում ռեալ իշխանությունը, իսկ նախագահներն ավելի ներկայացուցչական դեր են կատարում: Ներկա իրադրությունում նման տպավորություն է թողնում Բուշ-Չեյնի գույզը և, չի բացառվում, որ պատկերը նույնը կլինի, եթե հաղթանակի Բարաք Օբաման:

³ <http://lenta.ru/news/2008/09/07/manevres/>, <http://lenta.ru/news/2008/09/08/base/>

թյունը Ռոքի լեռնանցքի հյուսիսում կանգնած ռուսաստանյան 58-րդ բանակի առակայության դեպքում գործնականում ավելի քան փոքր էր: Բացառված չէ սակայն, որ գուցե և որպես «հաղթանակ» պատկերացվում էր հաջող հարձակողական գործողությունների արդյունքում վրացական զինուժի նահանջը ռուսական հակահարվածից հետո, որը կմեղմվեր տարբեր խորովակներով ՌԴ ղեկավարությանը հորդորելու և ճնշումներ բանեցնելու միջոցով: Հետո կսկսվեր բանակցությունների մի նոր և շահեկան փուլ արդեն «կոտրված» ՀՕՀ-ի, «անկամ» Ռուսաստանի և «հաղթանակած» Վրաստանի պարագայում: Նման սցենարը, ռազմավարական օգուտներից բացի, կբարձրացներ նաև ԱՄՆ հեղինակությունը տարածաշրջանային և գլոբալ հարթություններում և կամրագրեր ՌԴ՝ որպես անօգնական երկրի, իմիջը, դրանից բխող բոլոր հետևանքներով¹:

Այն, որ ԱՄՆ-ը պատրաստ էր պատերազմական գործողություններին, անուղղակիորեն վկայում է, թերևս, նավթի գների կտրուկ անկումը, ինչը խիստ զգայուն հարց է Ռուսաստանի համար: Եվ դա այն պարագայում, երբ Բաքու-Ջեյհան նավթամուղի անմիջական հարևանությամբ տեղի էին ունենում ռազմական գործողություններ²: Մինչդեռ նախկինում «նավթային տարածաշրջաններում» ռազմական, անգամ տեսականորեն հնարավոր, զարգացումների վերաբերյալ լրատվությունները հանգեցնում էին նավթի գների աճի: Անշուշտ, նման հարցադրումը, հաշվի առնելով էներգակիրների գնագոյացման ավելի քան բարդ մեխանիզմը, բավական վիճահարույց է, սակայն գների անկման խնդիրը դեռևս սպառիչ պատասխան չի ստացել:

Մինևույն ժամանակ, տեղեկատվական երրորդ սերնդի պատերազմների «էֆեկտները» վրաց-ռուսական պատերազմի առիթով չեն սահմանափակվում միայն ԱՄՆ ներքաղաքական զարգացումներով և ՌԴ-ի համար հնարավոր բացասական հետևանքներով: Դրանք ուղղված էին նաև այլ երկրների դեմ:

Ինչպես հայտնի է, ներկայումս սպորտային միջոցառումները խիստ քաղաքականացված են, և Պեկինի օլիմպիական խաղերին նախորդեցին տիբեթցիների ու նրանց համախոհների բողոքի ակցիաները, որոնք ՉԺՀ-ն վարկաբեկելու նպատակով կազմակերպված դասական տեղեկատվական գործողություններ էին: Պատերազմն օլիմպիադայի օրը սկսելը կարելի է համարել այդ գործողությունների շարունակություն որակական ավելի բարձր հարթությունում, քանի որ այդպիսով տեղեկատվական տեսանկյունից ստվերվեց այդ մասշտաբային սպորտային-քաղաքական միջոցառումը:

Ինչպես տեսնում ենք, ԱՄՆ քաղաքական օգուտները «պարտված պատերազմից» բավական լուրջ են և վկայում են այն մասին, որ ԱՄՆ-ը իրագործում է, ըստ վերը բերված ձևակերպման, «բացասական արդյունքից բխող էֆեկտների քաղաքականություն», որի արտահայտություններն են ինչպես «մասնակի գունավոր հեղափոխության» փորձը ՀՀ-ում, այնպես էլ վրաց-ռուսական պատերազմը:

Մինևույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ ամերիկացիներն իրենց հաշվարկներում թույլ են տվել նաև բացթողումներ, որոնք արտահայտվեցին նախագահ Բուշի այն խոսքերով, թե Ռուսաստանի գործողությունները «ոչ աղեկվատ ուժի կիրառում են»: Այս ձևակերպումը լայնորեն տարածվեց և դարձավ տարբեր արևմտյան քաղաքական գործիչների հիմնական գնահատականը կատարվածին: Այլ խոսքերով՝ հնարավոր է, որ ԱՄՆ ռազմաքաղաքական գործողությունները պլանավորող մարմիններն իրենց մշակումներում գուցե և թերագնահատել էին Ռուսաստանի պատասխան քայլերի ծավալը և կոշտությունը: Հնարավոր է, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Միացյալ Նահանգների ներկայիս վարչակազմը ձևավորվել է դեռևս 2000թ., այսինքն՝ միաբևեռ համակարգի պայմաններում, երբ Ռուսաստանը երկրորդական դերակատարում ուներ գլոբալ հարթությունում. բավական է նշել, որ այն ժամանակաշրջանում ՌԴ բյուջեն կազմում էր ընդամենը մի քանի տասնյակ մլրդ դոլար:

¹ Չի կարելի բացառել, որ զարգացումների հենց այս տարբերակն էին մատուցում վրացական կողմին ամերիկացի խորհրդականները:

² Այս տեսանկյունից բավական մշուշոտ է մնում Բաքու-Ջեյհան նավթամուղի թուրքական հատվածում օգոստոսի 5-ին տեղի ունեցած պայթյունը, որով կարծես թե «փակվեց» այդ նավթամուղի հետ կապված խնդիրների շահարկումն արդեն պատերազմական գործողությունների ժամանակ. տե՛ս <http://www.rian.ru/economy/20080820/150532957.html>:

Հետևանքները. Պատերազմի արդյունքները միանշանակ չեն կողմերից և ոչ մեկի համար: ԱՄՆ-ի հետ կապված նկատառումները դիտարկվեցին վերը: Այս ենթաբաժնում համառոտ կներկայացնենք պատերազմի արդյունքների հնարավոր ազդեցությունը ՌԴ-ի, Վրաստանի և ՀՀ-ԼՂՀ-ի վրա¹:

Ռուսաստանի Դաշնություն. Ինչպես նշեցինք վերը, ամերիկյան կողմի համար Ռուսաստանի վճռականությունը և ռազմական գործողությունների մասշտաբը՝ Կոդորի կիրճում վերահսկողության հաստատումը, բուն Վրաստանի տարածքում բնակավայրերի ժամանակավոր գրավումը, ՀՕՀ-ի ու ԱՀ-ի արագ ճանաչումը գուցե և սպասելի չէին: Միննույն ժամանակ, չպետք է կասկածել, որ ռուսական կողմն ուներ ռազմական գործողություններին մասնակցելու իր մշակած սցենարը և սեփական պատկերացումները դրանց զարգացման ու հետևանքների մասին: Որոշ վերլուծաբաններ հակված են անգամ այն վարկածին, որ ռուսական կողմը մտածված կերպով թույլ տվեց Ցիսինվալի զանգվածային հրետակոծումը և վրացական ՁՈւ առաջխաղացումը, որպեսզի իր գործողությունները հանրությանը ներկայացնի որպես «հումանիտար աղետից» փրկելու նպատակով վարած «արդարացի» պատերազմ:

Բոլոր պարագաներում ՌԴ կոշտ պատասխանը նրան որոշակի քաղաքական դիվիդենտներ բերեց (*ոխկերը նշել ենք վերը*), որոնցից թվարկենք հետևյալները.

1. Պատերազմի իրականացված սցենարը շահեկան էր ՌԴ-ի համար ներքաղաքական առումով. վերջին ժամանակահատվածում առաջին անգամ այդ երկիրն արագ և հաղթական պատերազմ վարեց, ինչը ձեռքբերեց ռուսաստանյան հանրությանը պարտվողական բարդություններից, միավորեց հասարակությանը և պատկերավոր ցուցադրեց Պուտին-Մեդվեդև երկյակի քաղաքական գծի արդյունավետությունը:
2. Պատերազմը շահեկան էր ՌԴ-ի համար հետխորհրդային տարածքում իր վարկանիշի բարձրացման տեսանկյունից. կասկածից վեր է, որ այդ տերության դերակատարումը հետխորհրդային տարածքում ավելի է բարձրանալու. այդ հանգամանքը մասնավորապես արտահայտվեց Ուկրաինայում քաղաքական իշխող կոալիցիայի փլուզումով²:
3. Պատերազմը շահեկան էր ՌԴ-ի համար նաև գլոբալ հարթությունում: Քաղաքական կամքի դրսևորումը միշտ իրեն է ձգում նոր դաշնակիցների և ամրացնում դիրքերը մրցակցային դաշտում:
4. Պատերազմը վարկաբեկեց Ռուսաստանի ավանդական մրցակից ԱՄՆ հեղինակությունը գլոբալ և տարածաշրջանային հարթություններում:
5. ԱՄՆ վարկաբեկումը, չնայած ՌԴ-ԵՄ միջև ծագած լարվածությանը, մեծացրեց մասնավորապես «հին» Եվրոպայի և ԱՄՆ տարածայնությունները, քանի որ ակնհայտ դարձավ, որ ի տարբերություն Առաջին սառը պատերազմի, ներկայիս եվրոպացիներն առանձնապես չեն ձգտում պատերազմել Ռուսաստանի դեմ հանուն երրորդ տերության շահերի:

Վրաստան. Չունենալով քաղաքական ինքնուրույնություն՝ այդ երկիրը հոգեբանական և նյութական հարվածներ կրեց: Եվ եթե սպառազինության խոշոր կորուստները³ կարելի է մոտ ապագայում վերականգնել, ապա վարկանիշի անկումը երկարատև բնույթ կընդունի. Վրաստանն այսօր անգամ իր մոտ դաշնակիցների կողմից ընկալվում է որպես չկայացած երկիր: Այդ առումով ՆԱՏՕ ընդունվելու՝ Վրաստանի ղեկավարության ունեցած կասկածելի հեռանակարները, թերևս, չեն կարող փոխհատուցել այդ երկրի կրած համալիր վնասները:

Հայաստան (ՀՀ, ԼՂՀ և Զավախք). Որպես ռազմավարական հետևանք պետք է ամրագրել այն փաստը, որ եթե Առաջին սառը պատերազմի լոկալ ռազմական բախումներն ընթանում էին Հարավարևելյան և Կենտրոնական Ասիայում, ապա նոր ժամանակաշրջանի առաջին

¹ Պատերազմի ազդեցությունը տարածաշրջանային այլ երկրների, հատկապես Թուրքիայի և Իրանի վրա, առանձին հետազոտության առարկա է:

² Տե՛ս, օրինակ, <http://lenta.ru/articles/2008/09/03/apart/>

³ Տե՛ս, օրինակ <http://www.lenta.ru/articles/2008/08/21/trophy/>

լոկալ պատերազմը տեղի ունեցավ Հայաստանի հյուսիսային սահմանների անմիջական հարևանությամբ: Մասնավորապես, ռազմական գործողությունները, Վրաստանով անցնող հաղորդակցական ուղիների հետ կապված, լուրջ խնդիրներ առաջացրին. ըստ որոշ գնահատականների՝ ՀՀ տնտեսական վնասները դրա հետևանքով կազմեցին մոտ \$0.5 մլրդ: Հատկանշական է, որ հնարավոր մեկ այլ պատերազմի մասնակից կարող է հանդիսանալ հարավային հարևան Իրանը. հնարավոր ռազմական բախումը ԱՄՆ (Իսրայել) - Իրան հարթությունում պարբերաբար ակտուալանում է¹: Այս հանգամանքները խիստ մտահոգիչ են և, անշուշտ, մեծացնում են Հայաստանի ռիսկերն ազգային անվտանգության տեսանկյունից:

Միննույն ժամանակ, պատերազմական գործողություններից հետո ձևավորվող իրադրությունը մարտավարական առումով, թերևս, կարելի է բարենպաստ համարել Հայաստանի համար: Դրանք սթափեցնող ազդեցություն գործեցին Ադրբեջանի ղեկավարության վրա (դրա մասին են վկայում այդ երկրի քաղաքական գործիչների և վերլուծաբանների ելույթները), քանի որ հիշեցրին, որ ցանկացած ռազմական գործողություն կարող է ընթանալ ոչ միայն մեկ կողմի կանխանշած սցենարով:

ԼՂՀ կարգավիճակի շուրջ քննարկումների աշխուժացումը պետք է դրական ընկալել, սակայն ոչ ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ն անհապաղ «ճանաչելու» առումով. այս հարցում անվտանգության գործոնը պետք է գերակայի «կարգավիճակի» և ճանաչման (այն էլ՝ միակողմանի) գործոնի նկատմամբ: Կարգավիճակի հետ կապված խնդիրները լուծումներ են ստանում աշխարհաքաղաքական խոշոր միավորների քաղաքական կամքի առակայության պարագայում, ինչը մենք տեսանք Կոստովոյի, ՀՕՀ և ԱՀ պարագայում, մինչդեռ ԼՂՀ դեպքում ներկայիս *status quo*-ն կարծես ձեռնտու է խոշոր տերություններից շատերին: Այլ խնդիր է, որ անհրաժեշտ է նախապես պատրաստել իրավաբանական, դիվանագիտական և ռազմաքաղաքական գործողությունների լավ մշակված «փաթեթներ» տարածաշրջանային ամենատարբեր զարգացումների պարագայում կիրառելու նպատակով:

Հատուկ շեշտենք, որ նման փաթեթներում իրենց մասը պետք է ունենան նաև Ջավախքի և վրաստանաբնակ հայության խնդիրները: Ակնհայտ է, որ Վրաստանի ներկայիս ղեկավարությունը չի կարող Ջավախքի անվտանգության լիարժեք երաշխավոր լինել (տե՛ս հոդվածի բնաբանը): Լրջագույն խնդիրներ կան Թբիլիսիի հայկական համայնքի համատեքստում, որի որոշ ներկայացուցիչներ իրենց լոյալությունն իշխանություններին, անշուշտ, կարող էին և ավելի զուսպ արտահայտել:

Նկատենք նաև, որ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների որոշակի կարգավորման և սահմանի հնարավոր բացման ուղղությամբ ՀՀ քաղաքական ղեկավարության նախօրոք կատարած քայլերն արդեն իսկ որոշակիորեն նպաստեցին ՀՀ և ԼՂՀ անվտանգության բարձրացմանը տարածաշրջանում ստեղծված ռազմական լարվածության պայմաններում:

Աղբյուրներ և գրականություն

1. Г. Тер-Арутюнянц, «Многополярная и асимметричная холодная война», Вестник Академии военных наук, с. 23, 4(21), 2007.
2. Сергей Гриняев, *Поле битвы – киберпространство*, Минск, изд-во Харвест, 2004, см. также http://search.rand.org/search?v%3afile=viv_1018%4031%3aj5Y8Mo&v%3astate=root
3. Война и мир в терминах и определениях, под общей редакцией Дм. Рогозина, Изд-во “ПоПор”, 2004.

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

¹ Որոշ մեկնաբաններ կանխատեսում են, որ Իսրայելը հարվածներ կհասցնի Իրանի ռազմավարական օբյեկտներին անգամ մինչև ս.թ. հոկտեմբերը, սակայն նման զարգացումը, թերևս, իրատեսական չէ:

АРМЯНСКИЙ МИР И РЕГИОНАЛЬНАЯ СИСТЕМА БЕЗОПАСНОСТИ ЮЖНОГО КАВКАЗА ПОСЛЕ ОКОНЧАНИЯ ПОСТСОВЕТСКОЙ ЭПОХИ

Военная кампания августа 2008г. на Южном Кавказе инициировала лавинообразные процессы, обрушившие региональную систему безопасности Южного Кавказа. Планируемые масштабы военной кампании оценивались грузинскими политиками как локальные, не выходящие за границы постсоветской Грузии. Тот факт, что они послужили триггером для активизации геополитических процессов, охватывающих не только Южный Кавказ, но и международную систему безопасности, застал врасплох как Грузию, так и ее союзников, для которых такое развитие событий показалось «непропорциональным».

Однако ряд доводов уже сегодня позволяет с уверенностью говорить о том, что как сама военная кампания, так и ее результаты были вполне объективными и закономерными. Во-первых, Россия, как один из глобальных центров силы, на протяжении последнего времени демонстрировала мировому сообществу недвусмысленные сигналы о серьезности намерений защищать свои жизненные интересы на Кавказе. Возможно, инерция постсоветской эпохи, в течение которой Россия демонстрировала порой абсурдную политику, наносящую непоправимый урон российским интересам, не позволила Западу понять и принять к сведению всю серьезность российских намерений. Запад не захотел или сознательно проигнорировал возросшую за последние годы национальную мощь России, которая позволила ей адекватно ответить на геополитический вызов, брошенный ей в Грузии. Во-вторых, неустойчивое равновесие в регионе обеспечивалось двумя факторами: военным балансом, сложившимся в результате боевых действий 90-х годов, и консенсусом глобальных и региональных центров силы касательно региона. Стремительное перевооружение Грузии и Азербайджана и инициированная этим гонка вооружений неизбежно изменяли военный паритет в регионе, а глубокие противоречия центров силы относительно будущего Южного Кавказа делали возобновление боевых действий объективным и неизбежным.

Единственный вопрос заключался в том, где, в какой точке Южного Кавказа начнется обрушение системы региональной безопасности. Начало военной кампании требовало соответствующей политической воли, продемонстрированной Михаилом Саакашвили, после чего сама логика процессов делала неизбежным прямое вовлечение России в конфликт. Масштаб России и стремительность ее шагов не могли не привести к геополитическим сдвигам и потрясениям, последствия которых пока оценить сложно. Непосредственным и первым следствием, безусловно, является обвал региональной системы безопасности Южного Кавказа и образование вакуума, который заполнит новая, качественно отличающаяся от прежней система безопасности, что, в первую очередь, связано с изменением статуса и веса отдельных акторов в регионе. Сегодня можно констатировать, что качественно изменяются место и роль Южной Осетии, Абхазии, Грузии, а также ее столицы – Тбилиси, ранее рассматривавшейся Западом как центр региональной активности.

Действия Грузии, таким образом, привели к изменению сохранявшегося в постсоветский период геополитического равновесия и проявлению геополитики на Кавказе. Как следствие, в течение некоторого времени политические процессы как в регионе, так и мире в целом, будут определять дух и логика геополитики, неизбежно отодвигающие на задний план все прочие факторы. При этом вопрос о том, является ли такое развитие процессов ситуативным и реакцией на авантюристическую политику грузинского руководства или же мы сталкиваемся с просчитанными шагами и стратегией Запада по вовлечению России в геополитическое противостояние, как это имело место в Афганистане, не столь важен и представляет интерес для историков. Мы должны констатировать, что так называемый «постсоветский период» мировой

истории, характеризующийся крайней слабостью России, позади, и Армении¹, Южный Кавказ оказались в эпицентре процессов оформления новой эпохи, контуры которой остаются эластичными и неопределенными. В складывающихся условиях сценарное прогнозирование будущего Армении и региона приобретает другой вес и значение, так как позволяет, в определенных пределах, влиять на формирующуюся систему региональной безопасности.

В условиях неизбежной реструктуризации региона, перераспределения старых и освоения новых ролей остро встает вопрос о ключевом элементе, который в состоянии взять на себя «провалившиеся» и новые функции в будущей системе региональной безопасности. Такой элемент должен быть способен налаживать диалог и взаимодействие с глобальными и региональными центрами силы, другими акторами региона, обладать потенциалом для проведения многовекторной политики, позволяющей выравнять дисбалансы в системе. Так как в настоящее время определяющей является логика геополитики, то решающую роль будет играть готовность геополитических центров достичь консенсуса по данному вопросу. Последнее позволяет говорить о том, что маловероятно, чтобы функции были бы переданы региональным центрам силы – Турции или Ирану, так как это будет означать нежелательное их усиление. Инициативы, аналогичные «Кавказской платформе», в основе которых лежит попытка «сговора» одного из глобальных центров силы с региональным, также имеют мало шансов превратиться в реальность. Может ли новые функции взять на себя Азербайджан? Даже если оставить в сторону неконструктивность Азербайджана, проблемы, связанные с неэффективностью социальной структуры азербайджанского общества, последние события недвусмысленно продемонстрировали насколько уязвимой может быть страна, непосредственно соприкасающаяся с одним из глобальных центров силы.

Своего рода «метод исключений» позволяет прийти к выводу, что новые функции в регионе могла бы взять на себя Армения. В этом случае ключевой элемент новой региональной системы безопасности выбирается не только исходя из баланса геополитических сил в регионе, но и как следствие своего рода баланса уязвимости относительно глобальных и региональных центров силы. Уязвимость Армении относительно глобальных центров силы, ее зависимость от международных коммуникаций и выключенность из геоэкономических проектов, с одной стороны, и достаточный потенциал для того чтобы обеспечить выполнение функций ключевого элемента – с другой, предоставляют уникальный шанс для укрепления позиций Армении и превращения Еревана в «Брюссель» и «офис» складывающейся региональной системы безопасности Южного Кавказа. Возможность такой парадоксальной политики и стратегии, когда слабость превращается в силу и преимущество, достаточно хорошо разработана, например, в рамках китайской философии и стратегической мысли. Для проектировщиков новой системы региональной безопасности совмещение «офиса» и геоэкономических «производственных мощностей» в одном элементе является нежелательным и опасным, так как создает предпосылки для чрезмерного его усиления. **Наличие площадки, не участвующей в геоэкономических проектах, достаточно прочной и стабильной, способной защитить себя, в складывающихся условиях может быть привлекательным для глобальных акторов.** Чтобы данный сценарий получил шанс быть реализованным, армянство должно совершить качественный скачок и перейти от парадигмы государства к парадигме Армянского мира, включающего в себя РА, НКР и Спюрк. При этом важно понимать, что окно возможностей для такого скачка достаточно узкое.

Какими должны быть первоочередные шаги по реализации данного проекта. В первую очередь, это обсуждение подобного рода сценариев армянским экспертным сообществом, происходящее, безусловно, в рамках политической реальности, отрыв от которой может иметь катастрофические последствия. В рассматриваемом сценарии речь, фактически, идет о проектировании и балансировании на грани возможностей Армянского мира, когда потеря равновесия и чувства реальности приводит к катастрофе. С другой стороны, у Армении достаточно ограниченный выбор, и внешнеполитическая концепция, нацеленная на сохранение статус-кво

¹ Здесь и далее под Арменией понимаются два армянских государства – Республика Армения и Нагорно-Карабахская Республика, составляющие единое целое в культурном и военно-стратегическом пространствах.

постсоветской эпохи, в новых условиях лишена какого-либо смысла. Первая «мизансцена» очередного тура «Большой игры» на Кавказе сыграна, и в скором будущем Армения окажется перед неприемлемым для себя выбором, если не предложит своего видения региона. В складывающихся условиях, чтобы и далее иметь возможность реализовывать многовекторную политику, Армения должна разработать и предложить центрам силы проект, в рамках которого это возможно. Рефлекторная и пассивная политика в нынешних условиях означает проигрыш.

Необходимо понимать, что критически важным условием реализуемости проекта являются сильная и стабильная Армения, недвусмысленно демонстрирующая как региональным, так и глобальным центрам силы способность защитить себя. Это предполагает консенсус в обществе относительно будущего Армении, а также качественные изменения в военной организации. Существующие планы военной реформы, направленные на количественное увеличение боеготовности армянских вооруженных сил, должны быть пересмотрены с разработкой новой концепции качественных реформ. Без сомнения, также резко возрастает роль и вес внешнеполитической деятельности и армянской дипломатии, что также предполагает разработку новой концепции внешнеполитической деятельности. Аналогичным образом должны быть пересмотрены все ключевые аспекты армянской государственности. Речь, таким образом, идет о необходимости разработки новой стратегии и концепции национальной безопасности Армянского мира, в которой радикально изменяются функции и удельный вес его частей – РА, НКР и Спюрка. И в этом смысле мы должны говорить не только о политическом или государственном, но и идеологическом проекте, который имеет шанс быть реализованным, если Армянский мир окажется в состоянии сконцентрировать свой культурный, интеллектуальный, политический потенциалы и ресурсы на решение данной задачи. В состоянии ли Армянский мир обеспечить такую концентрацию – один из наиболее злободневных вопросов текущего момента.

Рачья Арзуманян

ԱՆԿԱՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2001թ. ամռանը Անկարայում հիմնվել է Հայկական հետազոտությունների ինստիտուտ կազմակերպությունը: Այն գործում է Թուրքիայի «Եվրասիա» ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնին կից: Վերջինս Թուրքիայում ռազմավարական ուսումնասիրություններ իրականացնող խոշոր կենտրոններից մեկն է: Ըստ առկա տեղեկությունների, կառույցը հովանավորվում է Թուրքիայի «Ազգայնական շարժում» (*MHP*) կուսակցության կողմից:

Հայկական հետազոտությունների ինստիտուտի կայքէջն է՝ www.eraren.org, «Եվրասիա» ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի կայքում՝ www.avsam.com.tr, տեղադրված է Հայկական ինստիտուտի լինքը: Կառույցը 2001թ. հրատարակում է «Հայկական հետազոտությունների հանդես» թուրքերեն հանդեսը, որը լույս է տեսնում տարին 4 անգամ: 2002թ. հրատարակվում է նաև հանդեսի անգլերեն տարբերակը՝ «*Review of Armenian Studies*»:

Կառույցը գործում է Կոնրադ Ադենաուեր 61 550 հասցեում, Անկարայի Չանկայա թաղամասում: Նույն թաղամասում է նաև Թուրքիայի նախագահի աշխատավայրը: Բավական զավեշտալի է, որ մերժողականություն տարածող կազմակերպությունը տեղակայված է Կոնրադ Ադենաուերի անունը կրող պողոտայում, որն, ինչպես հայտնի է, հետպատերազմյան Գերմանիայում դրեց ֆաշիստական ռճիրներն «առերեսելու» և «ապաշխարանքի» քաղաքականության հիմքը:

2002 և 2004թթ. կառույցը կազմակերպել է Հայկական հետազոտությունների կոնգրես: Կառույցում գործում է հայկական հարցի թեմայով աշխատանքային գրադարան, որն ունի ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, հայերեն և թուրքերեն գրականություն: Կառույցը նաև թեմատիկ վիդեո-արխիվ ունի: Ամառային ամիսներին ինստիտուտում կազմակերպվում է թուրք ուսանողների աշխատանքային պրակտիկան:

Կառույցի ներկայիս ղեկավարն է պաշտոնաթող դիվանագետ Օմեր Էնգին Լյուրեմը:

Թեև կառույցը կոչվում է Հայկական հետազոտությունների ինստիտուտ, սակայն գործառույթներով լիովին չի համապատասխանում անվանմանը: Հայկական քաղաքակրթության, մշակույթի, պատմության թեմաներով օբյեկտիվ ուսումնասիրությունների մասին խոսք լինել չի կարող: Կառույցն իրականացնում է գերազանցապես մերժողական բնույթի աշխատանքներ Մեծ եղեռնի հարցում, զբաղվում է հայկական սփյուռքի քարոզչական, հասարակական-քաղաքական գործունեության, տնտեսական կարողությունների ուսումնասիրությամբ: «Ինստիտուտի նպատակն է, աչքի առաջ ունենալով Հայկական հարցի պատմական, հոգեբանական, իրավական և միջազգային բաղադրիչները, ուսումնասիրել հարցը լայն ընդգրկումով», նշված է կազմակերպության կայքում:

2007թ. կառույցը հրատարակել է «Հայկական հարց. հիմնական տվյալներ և փաստաթղթեր» աշխատությունը, որում ներկայացված են Մեծ եղեռնի խնդրի վերաբերյալ թուրք և ամերիկացի «պատմաբանների» մերժողական բնույթի հոդվածներ: Մասնավորապես, Ջասթին Մըքքարթին ներկայացրել է «Հայկական ապստամբությունները և օսմանցիները» և «Թող վճիռը տան պատմաբանները» հոդվածները: Կա նաև ԼՂ հակամարտության թեմայով ենթաբաժին, որում գետնեղված է Օմեր Էնգին Լյուրեմի «Ղարաբաղյան հարց» աշխատությունը:

Ուշագրավ է, որ կառույցի գործունեության ընթացքում եղել է մի կարճ ժամանակահատված, երբ փորձ է արվել հրաժարվել «արմատական մերժողական» կեցվածքից և հայկական թեմաներով ուսումնասիրությունները չսահմանափակել զուտ մերժողականությամբ: 2003-2004թթ. կազմակերպության ղեկավար նշանակվեց Հասան Օքթայը, որն, ըստ առկա տվյալների, փորձ արեց շտկումներ մտցնել այս ծայրահեղական մոտեցումների մեջ: 2004թ. օգոստոսին Օքթայն այցելեց Երևան, Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և թանգարան: Հանդիպումների ընացքում արտահայտվում էր Թուրքիայում որոշակի ազատականացման օգտին: Օքթայի ղեկավարման ընթացքում Հայկական հետազոտությունների ինստիտուտը

կազմակերպեց Հայկական հետազոտությունների 2-րդ կոնգրեսը, որի ընթացքում զուտ մերժողական բնույթի աշխատանքների կողքին հնչել են նաև Հայոց պատմության այլ ժամանակահատվածներին, մասնավորապես՝ վաղ միջնադարյան շրջանին առնչվող ելույթներ:

Ըստ առկա տեղեկությունների, Օքթայի լիբերալ մոտեցումները սուր դժգոհություններ առաջացրին թուրքական ծայրահեղական շրջանակներում, որոշակիորեն լարվեցին Հայկական հետազոտությունների ինստիտուտի և Թուրքիայի պատմության ինստիտուտի հարաբերությունները: Հայաստանից վերադառնալուց մոտ 3 ամիս անց՝ 2004թ. տարեվերջին, Հասան Օքթայը հեռացվեց աշխատանքից:

Հասան Օքթայի անունը չի կարող դրվել ազատական հայացքներ ունեցող թուրք մտավորականների և իրավապաշտպանների կողքին՝ Հայիլ Բերքթայ, Ելդա Օզջան, Օրհան Փամուք և այլն: Օքթայը պարզապես առավել չափավոր մոտեցումներ ուներ և ձգտում էր, չհայտնվելով ընդդիմադիրների շրջանակում, աշխատել պետական շրջանակների հետ՝ Հայկական հարցում պետական քաղաքականության մեջ որոշակի լիբերալիզմ ապահովելու ուղղությամբ: Օքթայի ջանքերը տապալվեցին՝ պետական շրջանակներում կոշտ և ծայրահեղական հայացքներով գործիչների հետ առաջացած սուր հակասությունների պատճառով:

Ուշագրավ է նաև ինստիտուտի կայքէջի այն բաժինը, որում գետեղված է տեղեկատվություն հայկական թեմատիկայի վերաբերյալ՝ թուրքական այլ հրատարակություններում: Մասնավորապես, ներկայացված է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հրատարակած «Թուրքական փաստարկներն ընդդեմ հայկական պնդումների» ուսումնասիրությունը, որը հրատարակության է պատրաստել Թուրքիայի պատմաբանների միության Հայկական ուսումնասիրությունների բաժանմունքի ղեկավար, «պատմաբան» Հիքմեթ Օզդեմիրը: Պետական արխիվների գլխավոր վարչությունը հրատարակել է «Օսմանյան փաստաթղթերում հայ-ամերիկյան հարաբերությունները» երկհատորյակը, Բիթլիսի նահանգապետերանը՝ Բիթլիսում հայերի կողմից իբր թե ընդդեմ թուրքերի իրականացված «ջարդերի» մասին հատորյակը, Էրդալ Իլթերի՝ «Մեծ դավաճանություն. հայկական եկեղեցին և ահաբեկությունը» գիրքը: Մա իրականում Իլթերի 1997թ. տպագրած «Հայկական եկեղեցին և ահաբեկությունը» գրքի վերահրատարակությունն է: Իլթերը հայտնի է իր ծայրահեղականությամբ: Ըստ Իլթերի վերը նշված աշխատության, հայկական կողմը սպանդի է ենթարկել 2,5 միլիոն թուրքերի: Իլթերը չի մանրամասնում, թե ինչպես կարող էին սահմանափակ տարածաշրջանում գործող սահմանափակ թվով հայկական ջոկատները նման ահասարսուռ ջարդ կազմակերպել, եթե, մի կողմ թողնելով հարցի պատմագիտական կողմը, զուտ տեխնիկապես դա իրականացնել պարզապես հնարավոր չէր: Կայքում ներկայացված է նաև տեղեկատվություն Թուրքիայում և ԱՄՆ-ում լույս տեսած անգլերեն հրատարակությունների վերաբերյալ, ինչպես, օրինակ, ԱՄՆ Յուտայի նահանգի համալսարանի կողմից հրատարակված «Հայկական ապստամբությունը Վանում» աշխատությունը, որի հեղինակներն են թուրքական մերժողականության «ամերիկյան ներկայացուցիչ» Ջասթին Մրքքարթին և մի խումբ թուրք հեղինակներ՝ Էսաթ Արսլանը, Ջեմալթեփին Թաշքըրան, Օմեր Թուրան: Կայքում ներկայացված է նաև մեկ այլ ամերիկացի «մերժողական» Գյունթեր Լևիի «Օսմանյան Թուրքիայում հայերի իրականացրած ջարդարարությունները» աշխատությունը:

Հատուկ ուշադրության է արժանի 2007թ. Անկարայում հրատարակված «Սովորում եմ հայերեն» խորագրով հայոց լեզվի ինքնուսույցը: Ըստ կայքի, այն Թուրքիայում արևելահայերենի առաջին ինքնուսույցն է, հեղինակն է Բիրսեն Քարաջան: Բաղկացած է 160 էջից, 18 առանձին դասերից: Ուշադրության է արժանի նաև նույն Բիրսեն Քարաջայի հրատարակած «Արևելահայերեն-թուրքերեն» բառարանը: Բաղկացած է 372 էջից:

Հատկանշական է, որ հայկական կողմն առայսօր որոշակի առավելություն ունի Թուրքիայի հանդեպ, քանի որ անցնող տասնամյակների ընթացքում Հայաստանում զարգացել է թուրքագիտությունը, և ներկայումս որոշակի թվով մասնագետներ կան նշված ուղղությամբ աշխատելու համար: Սակայն Թուրքիայում հայագիտությունը չի զարգացել: Նշված գրքերի հրատարակությունը, արևելահայերենի հանդեպ աճող ուշադրությունը և հայոց լեզուն թուրքական բուհական համակարգ ներմուծելու աշխատանքն ու ինստիտուտի գործունեությունն ընդհանրապես վկայում են, որ Անկարան ձգտում է լրացնել բացը:

Հայկարամ Նահապետյան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գլոբալացման այսօրվա պայմաններում Թուրքիայի առջև ծառայած տնտեսական, ներքին ու արտաքին քաղաքականության և այլ հրատապ խնդիրները նոր ժամանակների պահանջներին համապատասխան լուծելու նպատակով խորքային վերլուծություններ կատարող կենտրոններ են ստեղծվել: Դրանք գործում են ինչպես հետազոտող կենտրոնների, այնպես էլ հիմնադրամների տեսքով: Շուրջ երեք տասնյակի հասնող կենտրոններ հիմնականում գործում են երկրի տարածքում, առանձին կենտրոններ էլ՝ երկրի տարածքից դուրս, հատկապես թուրքաշատ վայրերում՝ Գերմանիայում, Շվեյցարիայում, որոնք իրենց լուրման են ներդնում թուրքական սփյուռքի կազմակերպչական աշխատանքներում:

Թուրքիայում ռազմավարական կենտրոնների հիմնադրումը կապվում է 1960-ական թթ. հետ: Դրանք հիմնականում զբաղվում էին ներքաղաքական խնդիրներով: Սառը պատերազմի ավարտից հետո, պետական աջակցության շնորհիվ և հատկապես այս հարցում հետևողականություն ցուցաբերող Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի անմիջական նախաձեռնությամբ, որոշ հիմնադրամներ որակավորվում են որպես ռազմավարական հետազոտությունների կենտրոններ:

Հետազոտվող ուղղությունները. Յուրաքանչյուր կենտրոն գործում է ղեկավար կազմի կողմից նախապես առաջադրված ծրագրերի շրջանակներում, քննարկվում են դրանց իրականացման (ֆինանսական, կոնկրետ ուղղությամբ փորձագետների պատրաստման, ինչպես նաև նրանց ծրագրերում ներգրավելու) խնդիրները: Սակայն պետք է հաշվի առնել, որ շատ կազմակերպություններ առաջնորդվում են պետական պատվերով և այն կատարում հստակ նախատեսված ժամանակահատվածում՝ տարեկան հաշվետվության տեսքով:

Առավելապես ուսումնասիրվում են տարածաշրջանային, տնտեսական, էներգետիկ և այլ կարգի հիմնախնդիրներ, ծրագրերն ունեն նաև շարունակական բնույթ՝ կախված խնդրի առաջնահերթությունից: Տարածաշրջանային հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում Կովկասյան (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Հյուսիսային Կովկաս), Միջին Ասիայի (Թուրքմենստան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան), Բալկանյան, Հարավային Ասիայի (Պակիստան, Աֆղանստան, Հնդկաստան) երկրներին¹ (*տե՛ս 1, 2, 3, 4, 10, 13, 14, 15, 17, 18 կենտրոնները*): Կարևոր նշանակություն է տրվում համացանցի արդյունավետ օգտագործմանը: Այս հանգամանքի իրատեսության մասին է վկայում տեխնիկական հնարավորություններով տեղեկատվության հավաքման համար ստեղծված Հետախուզական տվյալների և հետազոտությունների գլխավոր տնօրինությունը²:

Վերջին տարիներին առավել մեծ ուշադրության են արժանանում համացանցային տեխնոլոգիաների զարգացման, կիբեռտարածությունում Թուրքիայի տեղեկատվական անվտանգության խնդիրները, որով առավելապես զբաղվում է «21-րդ դար» թուրքական ինստիտուտը (www.21yyte.org): Արդիական են նաև միջուկային սպառազինության թեման, Թուրքիա-Եվրամիություն, ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հնարավոր զարգացումների սցենարները՝ իրաքյան իրադարձությունների համատեքստում (*տե՛ս 1, 2, 11, 16, 18 կենտրոնները*):

¹ www.turksam.org.tr

² Օմեր Ենգին Լյութեմը (ներկայումս գլխավորում է Անկարայի հայկական հետազոտությունների կենտրոնը) 1981թ. հիմնադրել է Հետախուզատեղեկատվական տվյալների և հետազոտությունների գլխավոր տնօրինությունը, որն ամփոփ տեղեկություններ էր հավաքում ԱՄԱԼԱ-ի գործունեության, հայկական սփյուռքի, ցեղասպանության վերաբերյալ: Այժմ այն գործում է ASAM-ի (Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն) ենթակայության ներքո, որի մասնաճյուղի մեջ է մտնում նաև Անկարայի հայկական հետազոտությունների կենտրոնը: http://www.canim.net/biyografi/b/b%C3%BCy%C3%BCkel%C3%A7i/%C3%B6mer_engin_1%C3%BCtem/1576.html

Վերլուծական կենտրոնների կառուցվածքն ու կադրային քաղաքականությունը. Հիմնարկության գործունեությունն ամրագրված է կենտրոնի բոլոր խորհուրդների կողմից ընդունված ներքին հայեցակարգով, որում նշված են գույքը, ծախսերը և եկամուտներն ազատ տնօրինելու հիմնարար օրենքները, փորձագետների, ղեկավար խորհուրդների պարտականությունները, տնօրենների նշանակման և հեռացման սկզբունքները: Ըստ ընդունված հայեցակարգի՝ ղեկավար խորհրդին վերապահված է հեռացնել յուրաքանչյուրին, ով կթերանա աշխատանքի մեջ՝ անկախ պաշտոնից¹: Սույն կետը գործում է կենտրոնների մեծ մասում:

Հիմնադրամների և կենտրոնների կառուցվածքները միմյանցից տարբերվում են: Նշենք, որ շատ տեղերում բացակայում են գիտական խորհուրդները: Ամբողջ համակարգի օպերատիվ կառավարումը գտնվում է տնօրենի ձեռքում, որը պաշտոնավարում է ներքին ընտրական կարգով: Անմիջապես նրան են ենթարկվում փորձագիտական խորհրդի հիմնական և փոխարինող անդամները, վարչական, հետազոտվող ծրագրերի բաժինների ղեկավարները: Կենտրոնների ղեկավար կազմերը հիմնականում համալրվում են տեղի և արտասահմանյան ռազմական բարձրագույն հաստատություններում կրթություն ստացած բարձրորակ կադրերով: Նախկին զինվորականության մեջ հատկապես մեծ թիվ են կազմում ՆԱՏՕ պաշտպանության քոլեջն ավարտածները, որոնք առավելապես զբաղվում են Թուրքիայի անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրներին առնչվող վերլուծական ծրագրերով²:

Մեծ տեղ է հատկացվում նաև պաշտոնաթող դիվանագետներին, նախկին դեսպաններին, հյուպատոսներին: Շատ անգամ նախագահներ կամ տնօրեններ են դառնում հասարակական գործունեություն ծավալած անհատներ, որոնք մեծ հեղինակություն ունեն այդ երկրում, ինչպես նաև գործարարներ, որոնք էլ կարգավորում են ֆինանսական խնդիրները: Ըստ հետազոտվող ուղղությունների պահանջարկի՝ փորձագետները համալրվում են տարբեր բուհերի շրջանավարտներով, գիտության թեկնածուներով, հատկապես արտասահմանում ուսում ստացած քաղաքագիտության դոկտորներով, ակադեմիկոսների պատվավոր անդամներով:

Մեկ հետազոտվող ծրագրում նախատեսված է ունենալ միջինը 5-6 հիմնական ղեկավար՝ նախագծի տնօրեն, նախագծի երկու փոխտնօրեն, ծրագրի պատասխանատու և ասիստենտներ³ (2, 3 կենտրոններ):

Ներքին կարգով ընտրվում են նաև ներկայացուցիչներ, որոնք գործադրվում են արտասահմանյան երկրներ՝ առավել սերտ համագործակցելու տեղի երկրների հասարակական, սոցիոլոգիական հետազոտություններ իրականացնող կազմակերպությունների հետ: Բավարար ֆինանսական հնարավորությունների դեպքում կենտրոնին կարող են անդամակցել մինչև երեք հարյուր տարբեր ուղղվածության մասնագետներ (կենտրոն 3):

Կարևոր է առանձնացնել մեկ իրողություն ևս. գոյություն ունեն ընդամենը երկու կենտրոն, որոնք գործում են պետական գերատեսչությունների ենթակայության ներքո. Թուրքիայի արտգործնախարարությանը կից գործում է SAM-ը՝ «Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը», որն առավելապես զբաղվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնախնդիրների գնահատմամբ⁴: Իսկ երկրորդը Թուրքիայի ազգային անվտանգության համակարգի մեջ մտնող UGSAD-ն է՝ «Ազգային անվտանգության և ռազմավարական հետազոտությունների կազմակերպությունը⁵»: Այն ստեղծվել է 1992թ., ազգային անվտանգության ակադեմիայի շրջանավարտների ջանքերով:

¹ http://www.iyiyonetisimtesev.org:120/UD_OBJS/PDF/Genel/Vakif%20Senedi.pdf

² Օրինակ, «21-րդ դար» թուրքական կենտրոնի փորձագետ, ք.գ.թ., դոցենտ Յաշար Օնայը թուրքական ռազմածովային ուժերի տարբեր բաժինների ղեկավար է եղել, բարձրագույն կրթություն ստացել է Ստամբուլի համալսարանի քաղաքագիտության բաժնում, նույն ժամանակահատվածում սովորել է Սան Անտոնիոյի (Տեքսաս) ՆԱՏՕ պաշտպանության քոլեջում (NATO Defence College), այնուհետև նույն քոլեջի Հռոմի մասնաճյուղում «Կովկասյան հակամարտություններ» թեմայով կարդացել է դասախոսություններ: <http://21yyte.org/tr/hakkinda.aspx?ID=21>

³ http://www.tesev.org.tr/default.asp?PAG00_CODE=HAKTRS04

⁴ <http://www.sam.gov.tr/>

⁵ Ղեկավար խորհրդի կազմում ընդգրկված են տարբեր համալսարանների ղեկաններ, գործարարներ, որոնք լուծում են ֆինանսական խնդիրները: <http://ugsad.org.tr/2008/?p=2>

Թուրքական վերլուծական կենտրոններում անցկացվում են նաև օտար լեզուների դասընթացներ: Հետաքրքիր են *TEPAV* (Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ) տնօրեն Գյուլեն Սաքի հետևյալ պարզաբանումները. «Հայկական հետազոտությունների թեման այսօր, ավելի քան երբևէ, արդիական է, սակայն չունենք մեկ կենտրոն, որը կարող է սովորեցնել հայերեն¹»:

Իսկ *ASAM* մասնագետներից Էրջան Չիթլիօղլուն, ազատ խոսելով ներքին խնդիրների մասին, ավելի հրատապ է համարում կենտրոնների մասնագետների պատրաստման հարցը: «Այսօր Մերձավորարևելյան երկրների խնդիրներն ուսումնասիրող մասնագետները բացարձակապես չեն տիրապետում արաբերենին, անգամ Կովկասի գծով փորձագետները ռուսերեն չգիտեն, այդպես հնարավոր չէ»: Տարբեր ղեկավարներ իրենց հարցազրույցներում անդրադարձել են օտար լեզուների իմացությամբ մասնագետներ չունենալու խնդրին:

Հատուկ նշանակություն ունի երկկողմանի համագործակցությունը նաև այլ կազմակերպությունների հետ, որոնց հետ համատեղ անց են կացվում սեմինար քննարկումներ, գիտաժողովներ:

Կենտրոնների ֆինանսավորումը պետական աջակցությամբ չի կատարվում, և առհասարակ, այս հարցում, թե որքան է յուրաքանչյուրի տարեկան բյուջեն, հստակություն չկա: Ըստ թուրքական աղբյուրների՝ կենտրոնների բյուջեն 1,5 մլն դոլար է (*տե՛ս 2, 3, 4, 11, 13 կենտրոնները*), 40 տոկոսը՝ որպես բարեգործություն, տրվում է գործարար շրջանակների կողմից: Քիչ չեն նաև արտասահմանյան կազմակերպությունների կողմից ստացվող գումարները, օրինակ՝ Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը գումարներ է ստանում Սորոսին պատկանող «Բաց հասարակություն» հիմնադրամից, Եվրամիության երկրներից (հատկապես Նիդեռլանդներից), Համաշխարհային բանկից²:

Արտաքին ֆինանսական հոսքերը, որ կազմում են շուրջ 60 տոկոս, վկայում են այն մասին, որ արևմտյան երկրները հետաքրքրված են Թուրքիայով: Պետք է նկատի ունենալ, որ դրանք տրվում են որոշակի ծրագրերի իրականացման համար: Սակայն սուղ բյուջե ունեցող կենտրոններն էլ, որոնք աջակցություն չեն ստանում պետական և արտաքին կառույցներից, սեփական նախաձեռնությամբ ռազմավարական հետազոտություններ կատարելու համար ստեղծում են գործուն բանկեր: Նման բանկ գործում է հատկապես «21-րդ դար» թուրքական ինստիտուտում:

Ամփոփելով՝ նշենք, որ Թուրքիայի վերլուծական կենտրոններն ունեն տասնամյակների պատմություն և կայացած կառույցներ են, որոնց հիմնական նպատակը Թուրքիայի և այլ տարածաշրջանների դժվարություններն ու հիմնախնդիրները համալիր կերպով ուսումնասիրելն ու, հնարավորության դեպքում, կենսագործելն է :

Թուրքական վերլուծական կենտրոններ

NN	Կենտրոնի թուրքական անվանումը	Հայերեն նշանակությունը	Վեբկայքի հասցեն	Կենտրոնի հասցեն
1.	Avrasya Stratejik Araştırmalar Merkezi	Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն	www.asam.org.tr	Քաղաք Անկարա, Կոնրադ Ադենաուերի փողոց թիվ 61, հեռ + 90 312 4916070 (PBX) Ֆաքս: 0 312 4916097
2.	21. Yüz Yıl Türkiye Enstitü	«21-րդ դար» թուրքական ինստիտուտ	www.21yyte.org	Քաղաք Անկարա, Քարափրնար թաղամաս փող. 64, հեռ + 90 312 475 58 65 Ֆաքս: +90 312 475 58 65

¹ Muhsin Öztürk-Mesut Çevikalp, Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715, 18.08.2008

² TESEV Başkanı Can Pakerden ilginç açıklamalar, <http://haber10.com/haber/26315>

NN	Կենտրոնի թուրքական անվանումը	Հայերեն նշանակությունը	Վեբկայքի հասցեն	Կենտրոնի հասցեն
3.	Türkiye Ekonomik ve Sosyal Etüdler Vakfı	Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ	www.tesev.org.tr	Ստամբուլ, Բանքալարի պողոտա, Քարաքյոյ թիվ 2 հեռ + (212) 292 89 03 Ֆաքս: (212) 292 90 46
4.	Uluslararası İlişkiler ve Stratejik Analizler Merkezi	Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների կենտրոն	www.turksam.org	Անկարա, Վերին փողոց, թիվ 8 հեռախոսահամարը չկա
5.	Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu	Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպություն	www.usak.org.tr	Սուսուլուի փողոց, թիվ 2, Մերուսեվլերի, Թանդոզան. հեռ: 0 (312) 212 28 86 (PBX) Ֆաքս: 0 (312) 212 25 84
6.	Stratejik Araştırmalar Merkezi	Ռազմավարական հետազոտությունների կենտրոն	www.stratejik.yildiz.edu.tr	Քաղաք Ստամբուլ Թադ. Յըլդըզ Քամփյուսու Բեշիքթաշ, հեռ: 0 212 327 07 20 Ֆաքս: 0 212 3272463
7.	Ulusal Güvenlik ve Stratejik Araştırmalar Derneği	Ազգային անվտանգության և ռազմավարական հետազոտությունների կազմակերպություն	www.ugsad.org.tr	Մեշրութիյեթի պողոտա, շ.41/7, Բաքանլըքլար, Անկարա 06420 հեռ: 0312 433 03 94 Ֆաքս: 0312 433 03 94
8.	Türkiye Ekonomi Politikaları Araştırmalar Vakfı	Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ	www.tepav.org.tr	Սողուրթոզուլի պողոտա, թիվ 43, Անկարա, հեռ:+90 312 292 5500 Ֆաքս:+90 312 292 5555
9.	Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi	Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն	www.tasam.org	Հալըջըլարի պողոտա, թիվ 100, Ֆաթիհ թաղ. Ստամբուլ հեռ:+90 212 635 61 51 – 532 60 66 Ֆաքս: +90 212 532 58 82
10.	Ekonomik ve Sosyal Araştırmalar Merkezi	Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կենտրոն	www.esam.org.tr	Չիյաբեդի պողոտա, 13 փողոց, թաղ. Բալգաթ, Անկարա հեռ: +90 312 287 63 76 Ֆաքս:+90 312 287 63 86
11.	Marmara Grubu Stratejik ve Sosyal Araştırmalar Vakfı	Մարմարայի խմբի ռազմավարական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ	www.marmaragrubu.org	Բարբարոսի Բուլվար, ԻԲԱ Բլոքլար, թիվ 42, թաղ. Բալմուջու, Ստամբուլ, հեռ: +90 212 213 05 56 - 57 - 58 Ֆաքս: 90 212 213 05 59
12.	Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmalar Vakfı	Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ	www.setav.org	Ռեշիդ Գալիբի պողոտա, Հերեքեյի փողոց, թիվ 10, Չանքայա թաղ., Անկարա հեռ: 0312-405 61 51 Ֆաքս: 0312-405 69 03
13.	KÖK Sosyal ve Stratejik Araştırmalar Vakfı	Սոցիալական և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ	www.koksav.org.tr	Մալթեփե թաղ. Անկարա Գյուլսերենի փողոց, շ.13/9, Հեռ: + 90312 232 43 73 Ֆաքս:+90312 231 04 74

NN	Կենտրոնի թուրքական անվանումը	Հայերեն նշանակությունը	Վեբկայքի հասցեն	Կենտրոնի հասցեն
14.	Ulusal Güvenlik Stratejileri Araştırma Merkezi	Ազգային անվտանգության ռազմավարությունների հետազոտման կենտրոն	www.tusam.net	Անկարա թաղ. Բահչեղիեվլեր, պողոտա թիվ 1, 10 փողոց, Հեռ: + (0 312) 223 09 89 Ֆաքս: + (0312) 223 49 44
15.	Global Strateji Enstitüsü	Գլոբալ ռազմավարության ինստիտուտ	www.globalstrateji.org	Անկարա, Քըզըլայ թաղ. Միթիաթիաշայի պողոտա, 2.46/3 Հեռ : +90 (312) 4302609 Ֆաքս: 90 (312) 4303948
16.	Stratejik Araştırmalar Merkezi	Ռազմավարական հետազոտությունների կենտրոն	www.sam.gov.tr	Անկարա, Քըրչիչեղի փողոց, 2.8/3 հեռ: 0090 312 446 04 35 0090 312 436 58 12 0090 312 446 22 86 Ֆաքս: 0090 312 445 05 84
17.	Dış Politika Enstitüsü	Արտաքին քաղաքականության ինստիտուտ	www.foreignpolicy.org.tr	Անկարա, Բիլքենդի համալսարան, Դողու Քամփյուսու 06800, հեռ: (312) 266 28 69, (312) 266 28 70 Ֆաքս: (312) 266 28 71
18.	Ankara Global Araştırmalar Merkezi	Անկարայի գլոբալ հետազոտությունների կենտրոն	www.ankaraagam.com	Անկարա, առաջին փողոց, Յենիշեհիր թաղ. Հեռ: 0312 434 59 50 Ֆաքս : 0312 434 59 54

*Արեստակես Միմալոբյան
«Նորավանք» հիմնադրամ*

ՄՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հայի համար ուսումը, գիրն ու գրականությունը շատ մեծ նշանակություն ունեն: Այդպես էր նաև անցյալում, երբ վանքերը, որոնք միջնադարյան պայմաններում ուսում և գիտելիք բաշխող միակ վայրն էին, լի էին ուսումնաստենչ դպիրներով: Եկեղեցի-գիտություն միասնությունն այնքան էր սերտաճել, որ քաղաքացիական դպրոցների առաջանալուց հետո էլ այն պահպանվեց, և հայկական դպրոցները սկսեցին կառուցել եկեղեցիներին կից: Պատճառներից մեկն էլ, անկասկած, այն էր, որ դպրոցաշինությունը քաջալերողներին գլխավորում էին կրոնականները: Եկեղեցի-դպրոց միասնությունն ուներ նաև գործնական պատճառներ, մասնավորապես՝ Սփյուռքի պայմաններում: Դրանք «ազգային» կառույցներ էին օտար հողի վրա: Նպատակահարմար էր բոլոր ազգային կառույցները հնարավորինս ամփոփ պահել:

Նույն սկզբունքով էին առաջնորդվում նաև թուրքահայերը (որոնք մի քանի պատճառ ևս ունեին, ինչպես, օրինակ, ապահովությունը), և արդյունքում՝ մինչ օրս գոյություն ունեցող պոլսահայ վարժարանների մեծ մասը գտնվում է եկեղեցիներին կից՝ հիմնականում բաժանելով նույն բակը և անգամ նույն մուտքը: Այս, առաջին հայացքից, դրական երևույթն ունեցավ իր բացասական կողմը Թուրքիայի Հանրապետության շրջանում, երբ Թուրքիան հռչակվեց «լաիք» երկիր, ինչը նշանակում էր, որ հոգևոր ոլորտը պիտի ամբողջովին տարանջատված լինի քաղաքականությունից, կրթությունից և պետական ոլորտից, ուստի և հայկական դպրոցները նույնպես ոչ մի կապ չէին կարող ունենալ եկեղեցու հետ:

Թուրքիայում համարյա բոլոր պետական կառույցներում կան բաժիններ, որոնք զբաղվում են փոքրամասնությունների հարցերով: Մույն բաժինների աշխատանքը, կարծես թե, կայանում է փոքրամասնությունների համար միշտ նոր դժվարություններ ստեղծելու մեջ: Այդպես կատարվեց նաև 60-ականներին, երբ իշխանությունները հիշեցին լաիցիզմի օրենքի մասին ու հայ համայնքից պահանջեցին, որ դպրոցների ու եկեղեցիների մուտքերը հստակորեն տարանջատվեն: Մի որոշ ժամանակ, օրինակ, Մուրբ Հարություն եկեղեցի հաճախող հավատացյալները ստիպված էին անցնել կողմնակի կեղտոտ ու անապահով փողոցներով, որպեսզի ծառայողական դռնից մտնեն եկեղեցի, մինչև որ խնդիրը կարգավորվեց:

Թեև պոլսահայ առաջին դպրոցը հիմնվել է 17-րդ դարում, սակայն դպրոցաշինությունը մեծ թափ ստացավ հատկապես 19-րդ դարում: Դպրոց չունենալը, սակայն, ամենևին էլ չէր նշանակում, թե հայ պատանիները զուրկ էին կրթվելու հնարավորությունից: Ուսման առաքելությամբ զբաղվում էին մասնավոր ուսուցիչները, հիմնականում քահանաները, որոնք համեմատաբար ուսյալ էին, ինչը պայման էր քահանա ձեռնադրվողների համար: Միաժամանակ, գործում էր «վարպետ դուդու»-ի համակարգը, որը տևեց մինչև 20-րդ դարի կեսերը, երբ արդեն Պոլսի բոլոր թաղերն ապահովված էին հայկական դպրոցներով: «Վարպետ դուդու» կոչվում էին գրաճանաչ տարեց կանայք, որոնք վճարի դիմաց իրենց տան մեջ այբուբեն էին դասավանդում փոքր երեխաներին: Այս դասընթացները մերօրյա մանկապարտեզների նախատիպն էին:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ պոլսահայության թիվը զգալիորեն նվազեց, որի հետևանքով նվազեց նաև հայ դպրոցականների քանակը: Հայկական դպրոցներում աշակերտների թվի նվազումը պայմանավորված էր ուրիշ հանգամանքներով ևս՝ պոլսահայ համայնքի կառուցվածքը կրել էր որոշ փոփոխություն: Մեծ թվով հայեր, որոնք ինչ-որ կերպ մնացել էին Թուրքիայի փոքրասիական մասում, այսինքն՝ Կ.Պոլսից դուրս, 1955-1980թթ. գաղթեցին Պոլիս: Այստեղից էլ մեծ թվով թե՛ պոլսահայեր և թե՛ գավառահայեր արտագաղթեցին զանազան երկրներ: Մինչև 50-ական թվականները Պոլսում հաշվվում էր մոտ 150 հազար հայություն, իսկ տարբեր բնակավայրերից Պոլիս ներգաղթածների թիվը կազմում էր մոտ 40 հազար: Ներկայումս մնացել է շուրջ 50 հազար հայություն Պոլսում, որոնց մեծ մասը եկվորներ են: Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից հետո, կամ ավելի ճշգրիտ՝ 1915-

ին հետևած ժամանակաշրջանում ամբողջ Թուրքիայի տարածքում (բացի Կ.Պոլսից) չէր մնացել ոչ մի գործող հայկական դպրոց: Գավառահայությունը գրկված էր իր բոլոր ազգային հաստատություններից: 1920-ականներից սկսած՝ տիրող վախի և ճնշումների տարիներին, գավառի հայ բնակչության համար երազ էր դարձել ոչ միայն հայեցի կրթությունը, այլև անգամ մայրենի լեզվի գործածությունը: Հայերեն չիմացող, կյանքում եկեղեցի չտեսած, հայերեն անուն կրելու իրավունքն անգամ չունեցող զանգվածներ, 1950-ականներից սկսյալ, ներթափանցեցին Պոլիս: Նրանք ունեին, սակայն, մի շատ կարևոր բան, որն այսօր կորցրել են բազմաթիվ «անունով հայեր»: Դա *ազգային գիտակցությունն է*: Կարճ ժամանակում նրանք հասան նախանձելի դիրքերի՝ շնորհիվ բացարձակ աշխատասիրության: Հայերեն չգիտեին, ու բոլորն էլ անուս էին, բայց իրենց երեխաներին ուղարկեցին հայկական դպրոցներ:

Այժմ պատկերն այլ է: Վերջին մի քանի տասնամյակներում թուրքական դպրոցների մակարդակը բարձրացավ, առաջացան անգլերեն ուսուցմամբ էլիտար դպրոցներ, և բազմաթիվ հայեր այսօր նախնտրում են իրենց զավակներին ուղարկել այդ դպրոցները, չնայած որ ընդունելությունը հատուկ քննություններով է, իսկ վարձավճարը բավական թանկ: Այսպիսով հայկական դպրոցներն ավելի են նոսրանում:

Այսօր Կ.Պոլսում գործող ազգային վարժարանների թիվը 14-ն է:

Գալֆայան ճեմարան վարժարան – Սկյուտար թաղամաս

Ներսեսյան Երմոնյան վարժարան – Սկյուտար

Սբ. Խաչ լիսե (Դպրեվանք) – Սկյուտար

Կեդրոնական վարժարան – Ղալաթիա

Էսայան վարժարան – Թաքսիմ

Սահակյան Նունյան վարժարան – Սամաթիա

Պեզճյան մայր վարժարան – Գումգաբու

Տատյան վարժարան – Պաքըրգյուղ

Մերամբեճյան վարժարան – Ֆերիգյուղ

Արամյան Ունճյան վարժարան – Գատըրգյուղ

Լևոն Վարդուհյան վարժարան – Թոփգաբու

Եշիլգյուղի վարժարան – Եշիլգյուղ

Գարակյոզյան վարժարան – Շիշլի

Թարգմանչաց վարժարան – Օրթագյուղ

Այս դպրոցները պատկանում են Հայկական Առաքելական համայնքին, իսկ հայ կաթողիկե համայնքն ունի չորս դպրոց, որոնք են՝

Բումնթիի վարժարան – Բումնթի

Սամաթիայի անարատ հղություն վարժարան – Սամաթիա

Պանկալթրի անարատ հղություն վարժարան – Պանկալթր

Պանկալթրի վարժարան – Պանկալթր

Աշակերտների թվի նվազումն անդրադարձել է նաև այս դպրոցների կառուցվածքի վրա: Այսպիսով, Էսայան վարժարանը, որի նախակրթական բաժինը¹ խառն էր, իսկ միջնակարգն ու լիսեյը միայն աղջիկներին էին վերապահված, անցել է սկզբից մինչև վերջ խառը ուսուցման: Կեդրոնականը նույնպես միայն արական վարժարան էր, այժմ անցել է խառը ուսուցման:

Ամբողջ հայկական դպրոցների մեջ առանձնակի տեղ էր գրավում Սբ. Խաչ լիսե (Դպրեվանքը): Այն հիմնադրվել էր 55 տարի առաջ, Խաչատուրյան պատրիարքի կողմից: Հիմնադրության գլխավոր նպատակը հայ եկեղեցու համար հոգևորականներ պատրաստելն

¹ Թուրքիայի կրթության համակարգը (որին ենթակա են նաև երկրում գործող հայկական վարժարանները) մինչև վերջին տարիները կազմված էր 5+3+3 ձևով: 5 տարի նախակրթարան (հիմնական պարտադիր ուսուցում), 3 տարի միջնակարգ և 3 տարի լիսե: Այս 3 փուլը ավարտելուց հետո միայն կարելի էր հաճախել համալսարան, որի համար պետք էր երկու աստիճանով քննություն հանձնել: Այժմ փոխվել է այս աստիճանավորման առաջին փուլը: Միջնակարգ կրթությունը, միացվելով նախակրթարանի ուսուցմանը, դարձել է 8 տարի պարտադիր:

էր, նախկին Արմաշի դպրեվանքի օրինակով մի դպրոց-ճեմարան (այդ պարճառով այն կոչվեց Դպրեվանք) ունենալը: Խանդավառությունը երկար չտևեց: Նման հոգևոր դպրոցի գոյությունը թույլատրելուց մի քանի տարի հետո իշխանությունները, այնուամենայնիվ, արգելեցին այն, ու դպրեվանքը վերածվեց հասարակ դպրոցի: Փոխվեց անգամ անունը, և Սբ. Խաչ Դպրեվանքը վերածվեց Սբ. Խաչ լիսեյի:

Գալֆայան վարժարանը, որը հիմնադրվել էր «Գալֆայան» միանձնուհիների միաբանության (միակն ամբողջ Հայ Առաքելական իրականությունում այն ժամանակ) կողմից, ունի մի ուրիշ, ոչ պակաս տխուր պատմություն: Այն կազմված էր երկու դպրոցից, մեկը՝ արական, իսկ մյուսը՝ իգական: Այս հույժ կարևոր և իր ժամանակին հոչակ հանած հաստատությունը գտնվում էր ոչ պակաս հռչակավոր Խասգյուղի Սբ. Ստեփաննոս եկեղեցու հարևանությամբ: 70-ականներին, ճանապարհաշինության պատրվակով, իշխանությունների կողմից քանդվեցին թե՛ վարժարանը և թե՛ Պոլսո ամենամեծ հայկական եկեղեցիներից մեկը հանդիսացող Սբ.Ստեփաննոսը: Դպրոցի արական մասը փակվեց, իսկ իգականը փոխադրվեց Սկյուտար թաղամաս. «լաիցիզմի» մասին օրենքներից էլնելով՝ արգելվեց մայրապետերի մուտքը դպրոց, որով այս դպրոցը նույնպես կորցրեց իր նախնական նշանակությունն ու առաքելությունը:

Պեզճյան վարժարանը գտնվում է մայր եկեղեցու և պատրիարքարանի հարևանությամբ ու, ինչպես անունն է հուշում, հիմնադրված է ազգային բարերար և հմուտ քաղաքագետ Ղազազ Արթին Ամիրա Պեզճյանի կողմից: «Մայր» վարժարան է կոչվել այն պատճառով, որ այնտեղ դասավանդվել է հայերեն քերականություն, որն այն ժամանակ բացակայում էր մյուս հայկական դպրոցների դասացուցակում:

Վերջին տասնամյակներում բազմաթիվ հայկական դպրոցներ փակվեցին՝ մասնավորապես աշակերտների պակասի պատճառով: Դրանցից ամենաճանաչվածներն էին՝

Պողոսյան Վարվարյան – Գումգաբու

Սբ. Ներսեսյան – Խասգյուղ

Մագրուհյան - Բեշիկթաշ

Հինդլիյան Նոր դպրոց - Բումունթի

Նշենք միայն, որ հանրապետության շրջանում փակված հայկական դպրոցների թիվը կրկնակի գերազանցում է այսօր գործողների թիվը:

Տիրան Լոբնազյոզյան

ՉԱԽՈՂՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆՂԵՔՍԸ 2008Թ.¹
2007-2008թթ. համեմատական վերլուծություն
Foreign Policy Magazine, The Fund for Peace. Failed States Index – 2008

2008թ. առաջին կեսին լույս տեսավ «Չախողված երկրների ինդեքսի» 2008թ. հաշվետվությունը, որի տարեկան վարկանիշային արդյունքները կփորձենք համեմատել 2007թ. համապատասխան հաշվետվության հետ՝ ուշադրություն դարձնելով ԱՊՀ, մերձբալթյան ու արևելավրոպական երկրների վիճակագրական տվյալների ու դրանց փոփոխությունների վրա: Թե՛ 2007 և թե՛ 2008թթ. տարեկան հաշվետվություններում ընդգրկված են 177 երկրներ:

Մեթոդաբանական հարցեր

Չախողված երկրները դասակարգվել են հետևյալ 12 ցուցիչների հիման վրա, որոնք ընդգրկված են երեք հիմնական խմբերում՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական: Ստորև տրվում է այդ ցուցիչները պատկերող աղյուսակը:

№	ցուցիչներ
<i>սոցիալական ցուցիչներ</i>	
1.	ժողովրդագրական ազդեցություն
2.	փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ
3.	դժգոհ զանգվածների գործոն
4.	մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք
<i>տնտեսական ցուցիչներ</i>	
5.	հասարակական խմբերի միջև տնտեսական զարգացման անհավասարություն
6.	կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում
<i>քաղաքական ցուցիչներ</i>	
7.	պետության քրեականացում և/կամ ապալեգիտիմացում
8.	պետական գործառույթների շարունակվող վատթարացում
9.	մարդու իրավունքների համատարած խախտում
10.	անվտանգության կառույցների ուժեղացում. նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում
11.	կլանային վերնախավերի ազդեցության մեծացում
12.	օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ

Ձեկույցում նշված երկրների դասակարգումը հիմնված է վերոնշյալ 12 ցուցիչների ընդհանուր գումարային տվյալների վրա: Յուրաքանչյուր ցուցիչի համար ընտրված է 0-10 թվային սանդղակ, որտեղ 10-ը համարվում է բարձրագույն՝ բացասական կետը, 0-ն՝ ցածրագույն՝ լավագույն կետը:

2008թ. զեկույցում ներառված 177 երկրները բաժանված են 4 խմբերի՝ ըստ երկրների ձախողվածության աստիճանի.

1. Ահազանգող ինտենսիվության երկրներ (վատագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը ներառված է 90.1-114.2 միավորների միջև),
2. Նախազգուշացնող (60.5-89.9),
3. Միջին (31.8-59.9),

¹ «Ֆորին Փոլիսի Մեզրզինի» և «Դը ֆանդ ֆոր Փիսի» պատրաստած ձախողված երկրների ինդեքսը վերաբերում է 2008թ.:

4. Կայուն (լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներ, որոնց ընդհանուր վարկանիշային ցուցիչը ներառված է 16.8-29.7 միավորների միջև):

Ընդհանուր դիտարկում

«Ֆորին Փոլիսի Մեգրգինի» և «Ֆանդ ֆոր Փիսի» ներկայացրած «Ձախողված երկրների ինդեքսը» 2008թ. վարկանիշային հաշվետվությունում առաջատար կամ կայուն երկրներ են համարվում 15 պետություններ, որոնք ընդգրկված են վերջին՝ 16.8-29.7 միավորներ ունեցող կայուն կոչվող խմբում: Այդ երկրների շարքում լավագույն ցուցանիշներ արձանագրել են նախնառաջ Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Շվեյցարիան, Դանիան, ինչպես նաև Ավստրալիան, Կանադան, Նիդեռլանդները, Բելգիան ու Ճապոնիան: Երրորդ՝ միջին կայունության խմբում ընդգրկված երկրների շարքում կարելի է թվարկել Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, մերձբալթյան երեք երկրները, Հունաստանը, Ռումինիան, Չեխիան, Բուլղարիան և այլն: Ընդ որում, Պորտուգալիան, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, իրենց ցուցանիշներով եզրափակելով միջին խմբի երկրների ցանկը, համարվում են այդ դասակարգման մեջ լավագույն վարկանիշային երկրները: 177 երկրների շարքում վատագույն երկրների ցանկը սկսում է Սոմալին, որին հաջորդում են Սուդանը, Զիմբաբվեն, Չադն ու Իրաքը: Այս խմբում են նաև Աֆղանստանը, Պակիստանը, ինչպես նաև Հյուսիսային Կորեան, Լիբանանն ու Սիրիան:

Հայաստանի դիրքը ԱՊՀ երկրների շարքում

Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրներին, ապա բացի Ուզբեկստանից, որն ընդգրկվել է առաջին՝ ահագանգող ինտենսիվության երկրների խմբի մեջ, ԱՊՀ անդամ մյուս պետությունները ներառված են երկրորդ՝ նախազգուշացնող խմբում: Այդ դասակարգման մեջ են ներառված նաև Իրանը, Իսրայելը և Թուրքիան: Ընդ որում, վերը հիշատակված երեք երկրներից լավագույն ցուցանիշը գրանցվել է Թուրքիայի պարագայում, որին հաջորդում են Իսրայելը և Իրանը:


Առավել հանգամանորեն ԱՊՀ երկրների մասով. թե՛ 2007 և թե՛ 2008թթ. հաշվետվություններում ԱՊՀ անդամ պետությունների շարքում Հայաստանը գրանցել է լավագույն ցուցանիշները: Նկատենք, որ թեև 2007թ. համեմատությամբ 2008թ. Հայաստանի վարկանիշային ցուցանիշը որոշակիորեն հետընթաց է ունեցել, սակայն պահպանել է առաջատարի դիրքը: Մասնավորապես, եթե 2007թ. վիճակագրությամբ Հայաստանը զբաղեցնում էր 112-րդ հորիզոնականը՝ 70.3 միավոր, ապա 2008թ. դրությամբ 109-րդ դիրքում է՝ 70.7 միավոր (Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների ենթացուցիչների արդյունքներին կարող էք ծանոթանալ ստորև ներկայացված աղյուսակներից): 2007թ. համեմատ, 2008թ. հաշվետվությունում ԱՊՀ անդամ պետությունների վարկանիշային ցուցանիշներում դիրքային փոփոխություններ, բացառությամբ մեկի, չեն գրանցվել: Մասնավորապես, եթե 2007թ. Ռուսաստանի ու Ադրբեջանի վարկանիշային ամփոփ ցուցիչները (81.2), ինչպես և զբաղեցրած դիրքերը (62) նույնն են եղել, ապա 2008թ. վիճակագրությամբ Ռուսաստանը բարելավել է իր արդյունքը (72-րդ դիրք)՝ 79.7 միավոր և այդ ցուցանիշով առաջ է անցել Ադրբեջանից:

ԱՊՀ պետությունների շարքում, Հայաստանից բացի, բարձր ցուցանիշներ են արձանագրել նաև Ուկրաինան, Ղազախստանը, Ռուսաստանն ու Ադրբեջանը: Ընդ որում, Ղազախստանը Կենտրոնական Ասիայի 5 հանրապետություններից միակն է, որ գրանցել է բարձր արդյունքներ ինչպես այս, այնպես էլ նախորդ տարվա վարկանիշային հաշվետվություններում (մնացած 4 միջինասիական հանրապետությունները գլխավորում են ԱՊՀ անդամ երկրների ցանկը՝ այդ երկրների ցուցակում ունենալով նվազագույն վարկանիշային արդյունքները):

Աղյուսակ 1. ԱՊՀ երկրներ, 2008թ.¹

Գիրք	Երկիր	Ցուցիչները (Ց)											Ընդհանուր վարկանիշ	
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11		Ց-12
26	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.7	9.3	6.8	9.2	9.0	9.2	6.3	93.4
38	Տաջիկստան	7.9	6.1	6.5	6.4	7.3	7.0	9.2	7.1	8.8	7.8	8.6	6.2	88.9
39	Ղրղզստան	7.5	5.8	6.8	7.8	8.0	7.5	8.4	6.5	7.9	8.1	7.5	7.4	88.8
46	Թուրքմենստան	7.0	4.5	6.2	5.6	7.3	7.1	8.7	7.7	9.6	8.3	7.9	6.3	86.2
50	Մոլդովա	7.0	4.7	7.3	8.4	7.2	7.2	8.3	7.0	7.1	6.5	7.7	7.3	85.7
53	Բելառուս	7.7	4.3	6.7	5.0	7.2	6.7	9.3	6.6	8.8	6.5	8.5	7.1	84.4
56	Վրաստան	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	83.8
64	Ադրբեջան	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	81.0
72	Ռուսաստան	7.0	5.4	7.5	6.5	7.9	3.7	7.9	5.9	8.7	7.0	8.0	4.2	79.7
101	Ղազախստան	6.2	3.6	5.2	4.0	6.5	6.0	7.7	5.5	6.8	6.5	7.8	6.6	72.4
108	Ուկրաինա	6.5	3.2	7.2	7.3	6.7	5.0	7.3	4.5	5.9	3.0	7.9	6.3	70.8
109	Հայաստան	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	70.7

Գրաֆիկ 1. Հայաստանի վարկանիշը ԱՊՀ երկրների շարքում՝ ըստ երկրների զբաղեցրած դիրքերի, 2008թ. (բարձրագույն դիրքը ցույց է տալիս երկրի բարձր վարկանիշային ցուցիչը)



Հայաստանի դիրքը հարակից երկրների շարքում 2007-2008թթ. համեմատությամբ

Ստորև ներկայացված աղյուսակում տրվում է Հայաստանի վարկանիշային համեմատականը տարածաշրջանի հարակից երկրների հետ 2007-2008թթ. կտրվածքով: Հայաստանն իր արդյունքներով գերազանցում է նշված բոլոր պետությունների վարկանիշային ցուցանիշները: Նկատենք, որ առանձնացված երկրների համեմատականում 2007-2008թթ. դիրքային փոփոխություններ չեն արձանագրվել: Ներկայացված պետություններից 2008թ. վիճակագրությունում նախորդ տարվա համեմատ դրական միտում է արձանագրվել միայն Ադրբեջանում, որը եթե 2007թ. ուներ 81.2 վարկանիշային միավոր, ապա 2008թ.՝ 81.0 (0.2 միավորի տարբերությամբ): 2007թ. համեմատ, ս.թ. Հայաստանի ցուցանիշը նվազել է 0.4 միավորով: Աղյուսակում ներկայացված երկրներից 2007թ. համեմատությամբ արձանագրած ցուցանիշի առավել բարձր նվազում նկատվել է, մասնավորապես, Իրանի (2.9 միավոր), Վրաստանի (1.5 միավոր) պարագաներում (տարածաշրջանի երկրների ամփոփ, ինչպես նաև ենթացուցիչների համեմատական վերլուծությանը կարող էք ծանոթանալ աղյուսակում):

¹ Աղյուսակները կազմվել են «Ֆորին Փոլիսի Մեգրգինի» և «Դը ֆանդ ֆոր Փիսի» պատրաստած «Ձախողված երկրների ինդեքսը-2008թ.» զեկույցի հիման վրա:

Աղյուսակ 2. Հայաստանը և հարակից երկրները, 2008-2007թթ.

Պիրք	Երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
2008թ.														
49	Իրան	6.5	8.7	7.3	5.0	7.4	4.3	8.0	5.8	8.7	8.5	9.0	6.5	85.7
56	Վրաստան	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	83.8
64	Ադրբեջան	6.0	7.8	7.3	5.3	7.0	5.9	8.1	5.5	6.9	7.2	7.5	6.5	81.0
92	Թուրքիա	6.7	6.2	7.6	5.0	8.2	4.6	6.0	5.2	5.5	6.7	7.5	6.2	75.4
109	Հայաստան	5.8	7.5	5.0	6.7	6.0	5.6	6.5	6.0	5.5	4.5	6.0	5.6	70.7
2007թ.														
57	Իրան	6.2	8.6	7.1	5	7.2	3.3	7.8	5.7	8.7	8.3	8.9	6	82.8
58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	82.3
62	Ադրբեջան	6	7.5	7.3	5.3	7.4	6.3	7.8	6	6.4	7.2	7.5	6.5	81.2
92	Թուրքիա	6.9	5.8	7.4	5	8.7	4.7	6.1	5.4	5.1	6.7	7.1	6	74.9
112	Հայաստան	5.8	7.6	5	6.9	6	5	6.5	6.2	5.5	4.5	5.8	5.5	70.3

Վրաստանի վարկանիշի դինամիկան 2006-2008թթ.

«Ձախողված երկրների ինդեքսը» 2006-2008թթ. ընկած ժամանակահատվածում Վրաստանի վարկանիշի դինամիկան կայուն բացասական միտում է արձանագրել: Այսպես, եթե 2006թ. հաշվետվությունում (ներառված են 146 երկրներ) Վրաստանը զբաղեցնում էր 60-րդ հորիզոնականը՝ ունենալով 82.2 միավոր, ապա արդեն 2007թ. դրությամբ՝ 58-րդ դիրքը՝ արձանագրելով համեմատաբար ավելի ցածր՝ 82.3 միավոր: Ավելին, 2007թ. համեմատությամբ ս.թ. Վրաստանի վարկանիշային ցուցանիշը է՛լ ավելի նվազեց՝ կազմելով 83.8 միավոր. երկիրը 177 երկրների շարքում զբաղեցրեց 56-րդ դիրքը:

Հետաքրքիր վիճակագրություն է ստացվում նաև ենթացուցիչների համեմատական վերլուծությունից: Այսպես, 2006-2008թթ. Վրաստանի լավագույն արդյունքները, որպես կանոն, գրանցվել են 6-րդ՝ կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում, 9-րդ՝ մարդու իրավունքների համատարած խախտում, 1-ին՝ ժողովրդագրական ազդեցություն և 4-րդ՝ մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք ենթացուցիչներում: Իսկ ցածրագույն ենթացուցիչներից կարելի է առանձնացնել 12-րդ՝ օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ, 10-րդ՝ անվտանգության կառույցների ուժեղացում. նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում, 7-րդ՝ պետության քրեականացում և/կամ ապալեզիտիմացում և 11-րդ՝ կլանային վերնախավերի ազդեցության մեծացում, ենթացուցիչներում, որոնք ընդհանուր առմամբ պահպանվել են նշված տարիների ընթացքում:

Աղյուսակ 3. Վրաստանի վարկանիշի դինամիկան 2006-2008թթ.¹

Թվական	Պիրք	Երկիր	Ցուցիչները (Ց)												ընդհանուր վարկանիշ
			Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11	Ց-12	
2006	60	Վրաստան	6	6.8	7.4	6.1	7	5.5	7.7	6.3	5.6	8.1	7.1	8.6	82.2
2007	58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	82.3
2008	56	Վրաստան	6.3	6.8	8.1	5.7	6.9	5.4	8.4	5.9	5.7	7.7	8.3	8.4	83.8

¹ «Ձախողված երկրների ինդեքսը» 2005թ. հաշվետվությունում Վրաստանը ընդգրկված չէ:

Հարավային Կովկաս. ենթացուցային վարկանիշ

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել Հայաստանի, ինչպես նաև հարավկովկասյան երեք հանրապետությունների ենթացուցիչների համեմատականին 2007-2008թթ. և առկա փոփոխություններին կամ միտումներին: Նկատենք, որ 2008թ. հաշվետվությունում Հայաստանի պարագայում նշված 12 ենթացուցիչների շարքում լավագույն վարկանիշը գրանցվել է մասնավորապես 10-րդ՝ քաղաքական ցուցիչում՝ անվտանգության կառույցների ուժեղացում, նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում: Այդ ենթացուցիչ արդյունքը նույնն է, ինչ 2007թ.: Բարձր վարկանիշ է գրանցվել նաև 3-րդ՝ սոցիալական ցուցիչի պարագայում՝ դժգոհ զանգվածների գործոն, որը նույնպես անփոփոխ է մնացել 2007թ. համեմատությամբ:

Հայաստանի ցածրագույն ենթացուցիչների շարքում առաջին հերթին կարելի է առանձնացնել փախստականների ու ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժը, ինչպես նաև մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսքը, որոնք երկուսն էլ դասվում են սոցիալական ցուցիչների շարքին: Ցածրագույն արդյունք է արձանագրվել 7-րդ՝ քաղաքական ցուցիչի պարագայում, որը վերաբերում է պետության քրեականացմանը և/կամ ապալեգիտիմացմանը: Ցածր ցուցանիշներ են գրանցվել նաև հասարակական խմբերի միջև տնտեսական զարգացման անհավասարության (5-րդ ցուցիչ), պետական գործառույթների շարունակական վատթարացման (8) և կլանային վերնախավերի ազդեցության մեծացման ցուցիչներում (11):

Ինչ վերաբերում է Հայաստանին հարակից մյուս հարավկովկասյան հանրապետություններին, ապա Ադրբեջանի պարագայում 2008թ. դրությամբ լավագույն արդյունքը գրանցվել է 4-րդ՝ սոցիալական ցուցիչում՝ մարդկային ռեսուրսների քրոնիկական և կայուն արտահոսք: Վերջինիս բարձր ցուցանիշներով հաջորդում են 8-րդ (պետության գործառույթների շարունակական վատթարացում) և 6-րդ (կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում) ցուցիչները: Ադրբեջանի վատթարագույն արդյունքը գրանցվել է մասնավորապես 7-րդ՝ քաղաքական ցուցիչում՝ պետության քրեականացում և/կամ ապալեգիտիմացում: Ինչպես և Հայաստանի դեպքում, Ադրբեջանի ցածրագույն ենթացուցիչների շարքում են նաև 2-րդ՝ սոցիալական ենթացուցիչը՝ փախստականների ու ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ և 3-րդը՝ դժգոհ զանգվածների գործոնը:

Վրաստանի պարագայում լավագույն արդյունքը պատկանում է տնտեսական 6-րդ ենթացուցիչին՝ կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում: Բարձր վարկանիշ ունեն նաև 4-րդ (մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք) և 9-րդ (մարդու իրավունքների համատարած խախտում) ցուցիչները: Իսկ վատագույն ցուցանիշները գրանցվել են մասնավորապես 7-րդ (պետության քրեականացում) և 12-րդ (օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ) ցուցիչներում (մանրամասն տե՛ս աղյուսակ 4/5-ում):

Աղյուսակ 4/5. Հարավային Կովկաս. լավագույն ու ցածրագույն ենթացուցիչներ-2008թ. (դասակարգումը՝ ըստ հիմնական երեք խմբերի)

լավագույն ենթացուցիչներ			
<i>Հայաստան</i>	քաղաքական ենթացուցիչ անվտանգության կառույցների ուժեղացում, նրանց հանդես գալը որպես պետություն պետության ներսում	սոցիալական դժգոհ զանգվածների գործոն	քաղաքական մարդու իրավունքների համատարած խախտում
<i>Ադրբեջան</i>	սոցիալական մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք	քաղաքական պետական գործառույթների շարունակվող վատթարացում	տնտեսական կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում
<i>Վրաստան</i>	տնտեսական կտրուկ և/կամ խոր տնտեսական անկում	սոցիալական/քաղաքական մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք, մարդու իրավունքների համատարած խախտում	քաղաքական պետական գործառույթների շարունակվող վատթարացում

ցածրագույն ենթացուցիչներ			
<i>Հայաստան</i>	սոցիալական փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ	սոցիալական մարդկային ռեսուրսի քրոնիկական և կայուն արտահոսք	քաղաքական պետության քրեականացում և/կամ ապալեզիտիմացում
<i>Ադրբեջան</i>	քաղաքական պետության քրեականացում և/կամ ապալեզիտիմացում	սոցիալական փախստականների և ներքին տեղահանվածների զանգվածային տեղաշարժ	քաղաքական կլանային վերնախավերի ազդեցության մեծացում
<i>Վրաստան</i>	քաղաքական պետության քրեականացում և/կամ ապալեզիտիմացում, օտար երկրների միջամտություն կամ արտաքին գործոններ	քաղաքական կլանային վերնախավերի ազդեցության մեծացում	սոցիալական դժգոհ զանգվածների գործոն

*Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ*

Աղյուսակ 6. ԱՊՀ և մերձբալթյան երկրներ, 2007թ.

Գիրք	Երկիր	Ցուցիչները (Ց)											Ցուցիչները (Ց)	
		Ց-1	Ց-2	Ց-3	Ց-4	Ց-5	Ց-6	Ց-7	Ց-8	Ց-9	Ց-10	Ց-11		Ց-12
ԱՊՀ երկրներ														
22	Ուզբեկստան	7.7	5.4	7.1	7.1	8.6	7.5	9.2	6.8	9	8.9	9.2	7	93.5
39	Տաջիկստան	7.7	6.1	6.3	6.4	7.3	7.3	9	7.3	8.6	7.8	8.8	6.1	88.7
41	Ղրղզստան	7.5	6.2	6.8	7.4	8	7.5	8.2	6.3	7.9	7.9	7.5	7	88.2
43	Թուրքմենստան	7	4.5	6.2	5.6	7.3	7.4	9	7.7	9.6	8.5	8.2	6.5	87.5
48	Մոլդովա	7	4.7	7.3	8.4	7.5	7.5	7.9	7.1	6.8	6.3	7.5	7.7	85.7
51	Բելառուս	8	4.6	6.5	5	7.5	6.8	9.1	6.9	8.5	6.7	8.5	7.1	85.2
58	Վրաստան	6.3	6.8	7.6	5.7	7	5.7	7.9	6.1	5.4	7.8	7.8	8.2	82.3
62	Ռուսաստան	7.5	5.9	7.7	6.5	8.2	3.9	7.6	6.2	8.5	6.8	8.5	3.9	81.2
62	Ադրբեջան	6	7.5	7.3	5.3	7.4	6.3	7.8	6	6.4	7.2	7.5	6.5	81.2
103	Ղազախստան	5.7	3	5.2	4	6.2	6.6	7.5	6.1	7	6.7	7.7	6.6	72.3
106	Ուկրաինա	6.5	3.6	7	7.5	7	5	7.5	4.5	5.9	3	7.9	6	71.4
112	Հայաստան	5.8	7.6	5	6.9	6	5	6.5	6.2	5.5	4.5	5.8	5.5	70.3
Մերձբալթյան երկրներ														
135	Լատվիա	5.2	5.7	4.6	5	7	5.8	4.7	4	3.8	2.2	4.4	4.3	56.7
140	Էստոնիա	4.8	4.8	4.5	4	4.9	3.7	5	3.8	3.7	2.1	5.9	3.3	50.5
143	Լիտվա	5.4	3.4	3.5	5.4	6.2	4.5	4.2	3.7	3.7	2	3	4	49

Աղբյուրը՝

http://www.fundforpeace.org/web/index.php?option=com_content&task=view&id=229&Itemid=366

http://www.fundforpeace.org/web/index.php?option=com_content&task=view&id=292&Itemid=452

СЦЕНАРИЙ БУДУЩЕГО

Экспертный проект TechCast опубликовал набор наиболее вероятных сценариев развития человечества на ближайшие десятилетия

Примерно 2010 год. Продолжение процессов развития информационных систем и электронной коммерции. В частности, ожидается бурное увеличение объемов информационного трафика, быстрое эволюционирование имеющихся и появление принципиально новых видов электронных устройств (например, система распознавания голоса сделает возможным управление машинами с помощью голосовых команд). Это приведет к кардинальным переменам в сфере государственного и корпоративного управления. Вероятен переход религий на «электронные» рельсы – к примеру, службы могут проводиться онлайн.

Возможно появление личных «электронных помощников» человека. Новые товары и услуги будут выводиться на рынок быстрее, чем когда-либо ранее. Стоимость информационных технологий и оборудования будет снижаться. Крах грозит многим нынешним гигантам – например, корпорации *Microsoft*, которая не выдержит борьбы с десятками новых конкурентов. Ожидается бум на рынках кино, музыки и ТВ.

Примерно 2020 год. Начало новой высокотехнологической революции. Ее движущими силами станут «зеленый» бизнес, альтернативная энергетика и иные практики, направленные на улучшение качества жизни человека, не угрожающее окружающей среде. Большой бизнес в массе своей перейдет на экологические рельсы.

Значительную часть мирового автопарка будут составлять гибридные автомобили, использующие в качестве топлива водород, биотопливо (спирт, растительное масло и пр.) или электроэнергию. К 2030г. примерно треть энергии будет получаться из возобновляемых источников. Бурное развитие ожидает сельское хозяйство (в том числе, основанное на использовании генетически модифицированных растений и животных).

Ожидается расцвет компьютерных и биотехнологий, результатом чего станет появление новых поколений медикаментов. В частности, прорывы в изучении ДНК человека сделают возможным клонирование его внутренних органов (сердца, печени, почек и пр.) и успешные операции по их пересадке. Также станут широко доступными их искусственные заменители. Многие серьезные болезни удастся полностью победить с помощью генетической терапии – «исправления» соответствующих участков ДНК.

